

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԵՔՅԱԹՆԵՐ

ՊԵՏՀՐԱՏ

1978

891.995

թ-95

50-Կ
1888

2011 - 07 6 NOV 2011

891.995
Բ-95

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հ Ե Ք Յ Ա Թ Ն Ե Ր

Ն կ ա Ր Ն Ե Ր
Մ ա ն ո կ Հ ա ռ ու թ յ ու ն յ ա ն հ ի

Պ Ե Տ Շ Ր Ա Տ
Հ Լ Կ Յ Ե Մ Կ Կ Կ Ի Ց Մ Ա Ն Կ Ա Մ Ա Տ Ա Ն Ե Կ Ա Կ Ա Ն Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Բ Ա Ժ Ի Լ
Յ Ե Ր Ե Կ Ա Ն 1998

17 APR 2014

8995



60428-67

ԳԱՌՆԻԿ ԱՒՊԵՐ

Յերկու վորբեր,
 Քուր ու ախպեր,
 Կորած գրնում են հետու.
 Արևը վառ,
 Ճամփեն յերկար,
 Վոչ աղբյուր կա, վոչ առու:

Քույրը մեծ եր, վոնց վոր լիներ
 Կը համբերեր արեին,
 Բայց ախպերը փոքրիկ եր գեռ,
 Չեր դիմանում ծարավին:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին,
 Կովի վտանատեղ՝ մեջը լեքը ջուր:
 «Քուրիկ ջան, քուրիկ, յես շատ եմ ծարավ,
 Ի՞նչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

— Չե, ախպեր ջան, չե, դու կով կըդառնաս,
 Կովի կըճղակի տեղից մի խրմի.
 Մի քիչ ել կացի... քիչ ել վոր կենաս,
 Առաջներըս պող աղբյուր կա հիմի:

Յերկու վորբեր,
 Քուր ու ախպեր,
 Գրնում, գրնում են հետու.
 Արևը վառ,
 Ճամփեն յերկար,
 Վոչ աղբյուր կա, վոչ առու:

Գրնում են, գրնում, տեսնում են ճամփին
Ձիու վտանատեղ՝ մեջը լիքը ջուր:
«Բուրիկ ջան, քուրիկ, յես շատ եմ ծարավ,
Ի՞նչ կըլի թողնես խրմեմ մի պուճուր»:

— Ձե, ախպեր ջան, չե, դու ձի կըդառնաս,
Ձիու սըմբակի տեղից մի խրմի,
Մի քիչ ել կացի, քիչ ել վոր կենաս՝
Մտաիկ մի դուլալ աղբյուր կա հիմի:

Յերկու վորբեր,
Բուր ու ախպեր
Գրնում, գրնում են հեռու.
Արեք վաս,
Ճամփեն յերկար,
Վոչ աղբյուր կա, վոչ առու:

Գրնում են, գրնում. տեսնում են ճամփին
Գառան վտանատեղ՝ մեջը լիքը ջուր:
Փոքրիկ ախպերը ել չի համբերում,
Բըրոջից թաքուն խմում է պուճուր:

Բուլբը մին ել յես է նայում,
Վոր մի գառը մղկըտալի
Իր յետեից աըխուր մայում
Ու մայելով վազ է տալի:

Խեղճ Մանուշը վայ է տալիս,
Վայ է տալիս, լալիս, լալիս.
Բայց ել ինչ աներ,
Բայց ել վննց աներ...

Յերկու վորբեր,
Բուր ու ախպեր,
Գառն ու աղջիկ մոլորված,
Հեռու յերկրում
Տըխուր-աըրտում
Գրնում, գրնում են կտրած:



Սոված ու ծարավ գրնում են, գրնում.
Գրնում են, գրնում, չըզիտեն թե ուր.
Վերջապես մի հով անտառ են մըանում,
Անտառի միջին մի գանգակ աղբյուր:
Կուշտ-կուշտ խըմում են են սառը ջրից,
Հետո Մանուշը ծառն է բարձրանում,
Գառնիկ ախպերն էլ ծառերի տակին
Մուշ-մուշ արածում, արոճ է անում:
Իրիկվան պահին խրխինջ ու քրքրիջ...
Լըցվում է հանկարծ անտառն ազմուկով.
Մոտիկ են գալի ձայները քիչ-քիչ...
Մոտիկ են գալի ծիծաղով, յերգով...

Յեվ անա վոսկի սանձերից բըռնած
Բերում են ջրեն ձիանքն արքայի:
Ամենի ձիանքն աղբյուրից խըրտնած՝
Ծառս-ծառս են կանգնում ու մոտ չեն գալի:
Մըտիկ են տալի ծառայքը մեկ էլ,
Վոր սիրուն մի ցուք ջրի մեջն ընկել,
Ու ջուրը քանի ալիք է տալի,
Նա էլ ջրի հետ գրնում է գալի:
Նայում են վերև: Ի՞նչ տեսնեն, ասոված.
Մի հուր-հրեղեն, մի շարմաղ աղջիկ,
Ծառի ճյուղերին նազելի նըստած՝
Նայում է ներքև լրոսիկ ու մընջիկ
Մի սիրուն աղջիկ արմանք ու գարմանք:
Չարմանք է պատում խեղճ ծառաներին.
Տեր ասոված, արդյոք ի՞նչ հըրաշք է սա,
Վայրի անտառում ի՞ջած էս ծառին:

— Ո՞վ էս, չըքնազ, տեսիլք էս դու,
Թե հողեղեն արարած.
Թե տեսիլք էս՝ կաց մի քիչ էլ,
Թե աղջիկ էս, արի ցած:
Յած յեկ տեսնենք ինչպես յեղավ,
Վոր ծագեցիր դու մեզ մոտ.
Ի՞նչ ցավ է քեզ արդյոք բերել
Մեր աշխարհքը անձանոթ:

— Մեզ վորբության ցափն է բերել
Չեր աշխարհքը անձանոթ:
Չայն է տալի ծառի վըրից
Մեր Մանուշը ամաշկոտ:
Մենք տուն չունենք, վոչ ապավեն
Ես լայն-արձակ աշխարհքում,
Մութն էլ հիմի շուտով կընկնի,
Վախենում ենք անտառում:

Ու ծառաները գառն ու աղջկան
Առնում են բերում պալատն արքայի:
«Ո՞վ էս դու, սիրուն,—հարցնում է արքան,—
Անբան գառան հետ ի՞նչ էս ման գալի»:

Կանգնում է աղջիկն ետեղ նորից նոր,
Պատմում է, ինչ վոր պատմեցի յես ձեզ.
Թե՛ ապրած կենաս, անեղ թագավոր,
Մեր բանը, հապա, եսպես ու եսպես...

Թագավորն յերբ վոր լըսում է մին-մին՝
Յեվ շատ ցավում է, է շատ հավանում.
Անում է նըրան իրեն թագուհին,
Յոթն ուր, յոթ գիշեր հարսանիք անում:

Ու փառքի միջում, շըքեզ գահլիճում,
Լիքն ու յերջանիկ ապրում է Մանուշ.
Գառնիկ ախպերն էլ ճոխ պարտեզներում
Մըտ է անում ու խաղում անուշ:

Պալատումը կար նախանձոտ ու շար
Մի պառավ կընիկ, հընուց աղախին.
Նախանձում է սա, թե վոնց պիտի գա
Մի վորբ՝ թագուհի գառնա մեր գըլխին:

Մի ուր էլ գալի, գըլուխ է տալի,
Առաջը կանգնում, կեղծավոր գովում.
«Արի քեզ տանեմ, սիրուն թագուհի,
Չըփ-չը՛փ լողացնեմ շարմաղ են ծովում»:

Սոված ու ծարավ զընում են, զընում:
Գընում են, զընում, չըզիտեն թե ուր:
Վերջապես մի հով անտառ են մըտնում,
Անտառի միջին մի գանգակ աղբյուր:
Կուշտ-կուշտ խըմում են են սառը ջրից,
Հետո Մանուշը ծանն է բարձրանում,
Գառնիկ ախպերն էլ ծառերի տակին
Մուշ-մուշ արածում, արոճ է անում:
Իրիկվան պահին խրխինջ ու քրքրիջ...
Լըցվում է հանկարծ անտառն ազմուկով:
Մոտիկ են գալի ձայները բիշ-բիշ...
Մոտիկ են գալի ծիծաղով, յերգով...

Յեվ անա վոսկի սանձերից բըռնած
Բերում են ջրեն ձիանքն արքայի:
Ամենի ձիանքն աղբյուրից խըրտնած՝
Ծառս-ծառս են կանգնում ու մոտ չեն գալի:
Մըտիկ են տալի ծառայքը մեկ էլ,
Վոր սիրուն մի ցուք ջրբի մեջն ընկել,
Ու ջուրը քանի ալիք է տալի,
Նա էլ ջրբի հետ զընում է գալի:
Նայում են վերև: Ի՞նչ տեսնեն, ասովանձ.
Մի հուր-հրեղեն, մի շարմաղ աղջիկ,
Ծառի ճյուղերին նագելի նըստած՝
Նայում է ներքև լըռիկ ու մընջիկ
Մի սիրուն աղջիկ արմանք ու զարմանք:
Զարմանք է պատում խեղճ ծառաներին.
Տեր ասոված, արդյոք ինչ հըրաշք է սա,
Վայրի անտառում իջած ես ծառին:

— Ո՞վ ես, չըքնազ, տեսիլք ես դու,
Թե հողեղեն արարած.
Թե տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ,
Թե աղջիկ ես, արի ցած:
Յած յեկ տեսնենք ինչպես յեղավ,
Վոր ծագեցիր դու մեզ մոտ.
Ի՞նչ ցավ է քեզ արդյոք բերել
Մեր աշխարհքը անծանոթ:

— Մեզ վորբության ցամախ է բերել
Զեր աշխարհքը անծանոթ:
Զայն է տալի ծառի վըրից
Մեր Մանուշը ամաշկոտ:
Մենք տուն չունենք, վոչ ապավեն
Նս լայն-արձակ աշխարհքում,
Մութն էլ հիմի շուտով կընկնի,
Վախենում ենք անտառում:

Ու ծառաները գառն ու աղջկան
Առնում են բերում պալաան արքայի:
«Ո՞վ ես դու, սիրուն, — հարցնում է արքան, —
Անբան գառան հետ ի՞նչ ես ման գալի»:

Կանգնում է աղջիկն ետեղ նորից նոր,
Պատում է, ինչ վոր պատմեցի յես ձեզ.
Թե՛ ապրած կենաս, անեղ թագավոր,
Մեր բանը, հապա՛, եսպես ու եսպես...

Թագավորն յերբ վոր լըսում է մին-մին՝
Յեվ շատ ցավում է, և շատ հավանում.
Անում է նըրան իրեն թագուհին,
Յոթն ո՛ր, յոթ գիշեր հարսանիք անում:

Ու փառքի միջում, շըքեղ գահիճում,
Լիքն ու յերջանիկ ապրում է Մանուշ.
Գառնիկ ախպերն էլ ճոխ պարտեզներում
Մըտ է անում ու խաղում անուշ:

Պալատումը կար նախանձոտ ու շար
Մի պառավ կընիկ, հընուց աղախին.
Նախանձում է սա, թե վոնց պիտի գա
Մի վորբ՝ թագուհի գառնա մեր գըլխին:

Մի ո՛ր էլ գալի, գըլուխ է տալի,
Առաջը կանգնում, կեղծավոր գովում.
«Արի քեզ աանեմ, սիրուն թագուհի,
Զրգի-չը՛ փ լողացնեմ շարմաղ են ծովում»:

Մոված ու ծարավ զընում են, զընում:
Գընում են, զընում, չըզիտեն թե ուր:
Վերջապես մի հով անտառ են մըտնում,
Անտառի միջին մի զանգակ աղբյուր:
Կուշա-կուշտ խըմում են են սառը ջրից,
Հետո Մանուշը ծառն է բարձրանում,
Գառնիկ ախպերն էլ ծառերի տակին
Մուշ-մուշ արածում, արոճ է անում:
Իրիկվան պահին խրխինջ ու քըրքիջ...
Լըցվում է հանկարծ անտառն աղմուկով:
Մոտիկ են զալի ձայները քիչ-քիչ...
Մոտիկ են զալի ծիծաղով, յերգով...

Յեվ անա վոսկի սանձերից բըռնած
Բերում են ջրեն ձիանքն արքայի:
Ամենի ձիանքն աղբյուրից խըրտնած՝
Ծառս-ծառս են կանգնում ու մոտ չեն գալի:
Մըտիկ են տալի ծառայքը մեկ էլ,
Վոր սիրուն մի ցուք ջրբի մեջն ընկել,
Ու ջուրը քանի ալիք է տալի,
Նա էլ ջրբի հետ զընում է գալի:
Նայում են վերև: Ի՞նչ տեսնեն, աստված.
Մի հուր-հրեղեն, մի շարմազ աղջիկ,
Ծառի ձյուղերին նազելի նըստած՝
Նայում է ներքև լըռիկ ու մընջիկ
Մի սիրուն աղջիկ արմանք ու գարմանք:
Չարմանք է պատում խեղճ ծառաներին.
Տեր աստված, արդյոք ի՞նչ հըրաշք է սա,
Վայրի անտառում իջած ես ծառին:

— Ո՞վ ես, չըքնազ, տեսիլք ես դու,
Թե հոգեղեն արարած.
Թե տեսիլք ես՝ կաց մի քիչ էլ,
Թե աղջիկ ես, արի ցած:
Յած յեկ տեսնենք ինչպես յեղավ,
Վոր ծագեցիր դու մեզ մոտ.
Ի՞նչ ցավ է քեզ արդյոք բերել
Մեր աշխարհքը անձանոթ:

— Մեզ վորբության ցափը է բերել
Չեր աշխարհքը անձանոթ:
Չայն է տալի ծառի վըրից
Մեր Մանուշը ամաչկոտ:
Մենք տուն չունենք, վոչ ապավեն
Ես լայն-արձակ աշխարհքում,
Մութն էլ հիմի շուտով կընկնի,
Վախենում ենք անտառում:

Ու ծառաները գառն ու աղջկան
Առնում են բերում պալատն արքայի:
«Ո՞վ ես դու, սիրուն,— հարցնում է արքան,—
Մերան գառան հետ ի՞նչ ես ման գալի»:

Կանգնում է աղջիկն ետեզ նորից նոր,
Պատմում է, ինչ վոր պատմեցի յես ձեզ.
Թե՛ ապրած կենաս, անեզ թագավոր,
Մեր բանը, հապա, եսպես ու եսպես...

Թագավորն յերբ վոր լըսում է մին-մին՝
Յեվ շատ ցավում է, է շատ հավանում.
Անում է նըրան իրեն թագուհին,
Յոթն ուր, յոթ գիշեր հարսանիք անում:

Ու փառքի միջում, շըքեզ գահլիճում,
Լիքն ու յերջանիկ ապրում է Մանուշ.
Գառնիկ ախպերն էլ ձոխ պարտեզներում
Մրոտ է անում ու խաղում անուշ:

Պալատումը կար նախանձոտ ու չար
Մի պառավ կընիկ, հընուց աղախին.
Նախանձում է սա, թե վոնց պիտի գա
Մի վորբ՝ թագուհի գառնա մեր զըլխին:

Մի որ էլ գալի, գըլուխ է տալի,
Առաջը կանգնում, կեղծավոր գովում.
«Արի քեզ տանեմ, սիրուն թագուհի,
Չըփ-չը՛ փ լողացնեմ շարմազ են ծովում»:

Խաբում ե, տանում, գցում ծովի մեջ,
Շորերը առնում, յետ բերում քաղաք,
Հագցընում իր սև, դարձվոր¹⁾ աղջրկան,
Պալատ ուղարկում թագուհու տեղակ:

Յերեսը ծածկած թանձրը շրդարշով
Պալատ ե մըտնում են սուտ թագուհին,
Ու թագավորն ել կասկած չի տանում,
Թե ով ե յեկել բազմել իր գահին:

Բայց ինչ անում են, ինչ վոր չեն անում,
Ձեն կարում ել տուն բերեն Գառնիկին.
Մայում—ես ափից են ափն ե վազում,
Մայում—են ափից յետ գալի կըրկին:

Ի՞նչ անենք սըրան, վո՞նց անենք սըրան.
Պառափս ու աղջրիկ շատ միտք են անում.
Վերջը գալիս ե դարձվոր թագուհին
Անկողին մըտնում, հիվանդ ձևանում:

Ել թանգ ուտելիք, ել ազնիվ մրգեր
Բերում են փրոտում, խնդրում, աղերսում.
Մըտիկ չի տալի վոչ մեկի վըրա.
Վերջը Գառնիկի մըսիցն ե ուզում...

«Բայց չե՞ վոր, Մանուշ, քո յեղբայրն ե նա.
Վո՞նց ես նըրա միսն ուզում գու հիմա...»

— Ի՞նչ անեմ, ինձնից նա աղիդ հո չի.
Յես վոր մեռնում եմ, թող նա ել կորչի...
Ասում ե, ճըչում. «Վայ, մեռա՛մ, ամա՛ն...»
Ու թագավորը տալիս ե հրաման.

«Կըրակ վառեցեք,
Դանակ սըրեցեք,
Բերեք մորթեցեք
Ախպեր-Գառնիկին,

1) Դարձվոր—դեմքը այլանդակված:

Վոր առողջ լինի
Իր քույրը տիկին»:

Թագավորն եսպես պատվեր ե տալի,
Պատվեր ե տալի ու դուրս ե գալի,
Գընում ե ծովափ սաստիկ սրտնեղած,
Թե վո՞րքան Մանուշն անգուլթ ե յեղած...

Մայում ե, լալիս Գառնիկ-Ախպերը,
Լացացնում ե ժեռ ծովի ափերը,
Մի ափից բըռնած մյուս ափն ե թըռչում,
Մարդկային լեզվով քըրոջը կանչում.

— Գուրիկ ջան, քուրիկ,
Կըրակ են վառում,
Կըրակ են վառում,
Դանակ են սըրում:
Գուրիկ ջան, քուրիկ,
Լըսի անդունդից,
Ոգնության հասի,
Սպանում են ինձ:

Լըսում ե արքան՝ տեղը քար կըտրած,
Յեվ ալիքների միջիցը հանկարծ
Շատ ծանոթ մի ձայն հեռու, խո՛ւլ ու խոր
Կանչում ե քնքուշ, կանչում ե անգոր.

«Ախպեր ջան, ախպեր,
Անհեր ու անմեր,
Անքուր ու անտեր,
Իմ Գառնիկ-Ախպեր.
Դըմար ե տեղըս,
Ձենըս չեն լըսում,
Ձենըս չեն լըսում,
Ձեռըս չի հասնում,
Մի, չար պառավը

Սե արավ որբս,
Այժմ ել կըսպանի
Գառնիկ-Ախպորբս»:

Կըսում ե արքան, պալատն ե հասնում,
Պատում ե քողը թագուհու դեմքի.
Պատում ե, տեսնում... բայց ինչ ե տեսնում,
Ո՛վ ե իր դահին յեղել թագուհի...

— Յեկեք, ձկնորսներ, ուռկան ձրգեցեք,
Հանեցեք ծովից մեր լավ Մանուշին.
Յեկեք, դահիճներ, ծովը ձրգեցեք
Կախարդ պառավին ու ես հրրեշին:

Եսպես բարկացած գտում ե արքան,
Ժողովուրդն ամեն թընդում ե ցավից,
Գալիս ե կանգնում, ձրգում ե սուռկան,
Անմեղ Մանուշին հանում ե ծովից:

Հանում ե ծովից, դահին բարձրացնում,—
Կրկին թագուհի ու տիկնանց տիկին.
Գառնիկ-Ախպերն ել անչափ խընդումից
Պատում ե իրեն վոչխարի մորթին,

Դուրս գալի, կանգնում սիրուն ազամարդ,
Ճակատը պայծառ, աչքերը վառ-վառ,
Վոչխարի տրկար մայունի տեղակ
Մարդկային լեզվով ազատ ու ճարտար:

Իսկ չար պառավին, իրեն աղջկան,
Վոր խարել էյին աշխարհ բովանդակ,
Վրդներից կապում ջաղացի քարեր,
Ձրգում են ծովի անդունդը անտակ:

Յերկու վորեր,
Բուր ու ախպեր
Առած պատիվ, դահ ու թագ.
Աշխարհքն ելի
Խաղանց ու լի,
Չարը թաղված ծովի տակ.

1905

ԶԱԽԶԱԽ ԹԱԳԱՎՈՐԸ

Լինում ե, չի լինում մի աղքատ ջաղացպան:

Ես ջաղացպանը մի որ գնում ե ջաղացի ջուրը թողնի, գալիս ե տեսնում՝ մի կտոր չոր պանիր ուներ՝ չկա:

Մին ել գնում ե ջուրը կապի, գալիս ե տեսնում՝ մի կտոր մոխրոտ բաղած¹⁾ ուներ՝ չկա:

Ես ո՞վ կլինի, ո՞վ չի լինի: Մտածում ե, մտածում ու ջաղացի շեմքում թակարդ ե լարում: Առավոտը վեր ե կենում, տեսնում՝ մի աղվես ե ընկել մեջը:

— Հը՞, գող անիծված, կաց՝ հիմի յես քեզ ցույց կտամ:— Ասում ե ու լինգը²⁾ վերցնում:

Աղվեսը աղաչանք պաղատանք ե անում:

— Ինձ մի սպանի,—ասում ե,—մի կտոր պանիրն ի՞նչ ե, վոր դրա համար ինձ սպանում ես: Կենդանի բաց թող, յես քեզ շատ լավություն կանեմ:

Ջաղացպանը լսում ե, կենդանի բաց ե թողնում:

Ես աղվեսը գնում ե, եզ յերկրի թագավորի աղբանոցում ման ե գալի ման, մի վոսկի յե գտնում: Վազ ե տալի թագավորի մոտ:

— Թագավորն ապրած կենա, ձեր կտոր³⁾ մի տվեք, Չախչախ թագավորը մի քիչ վոսկի ունի, չափենք յես կրերենք:

— Եզ ո՞վ ե:

— Իու գեռ չես ճանաչում,—պատասխանում ե աղվեսը:— Սա մի շատ հարուստ թագավոր ե, յես ել իր վեզերն եմ: Կտոր տուր, տանենք վոսկին չափենք. հետո կճանաչես:

Կտոր անում ե տանում, աղբանոցում գտած վոսկին ամբացնում կտտի ճեղքում, իրիկունը բերում, յես տալի:

— Ո՞ք,—ասում ե,—գոռով չափեցինք:

1) Բաղած—առանց թրթխմորի ալանի հաց. սովորաբար պատրաստում են ջաղացում:

2) Լինգ—յերկաթյա ծանր ձող:

3) Կոտ—հացահատիկ չափելու փայտե աման (20 ֆ.):

— Միթե ճշմարիտ սրանք կոտով վոսկի յես չափել,—մրտածում ե թագավորը: Կտոր թափ ե տալի, գընդալեն մի վոսկի յե վեր բնկնում:

Մյուս որը աղվեսը մի մարդարիտ ե գտնում. յես ե գալիս, թե՛ Չախչախ թագավորը մի քիչ ալն ու մարգարիտ ունի. ձեր կտոր տվեք, չափենք կրերենք:

Կտան անում ե տանում: Մարգարիտը կոխում ե կոտի սրանքը, ել յես իրիկունը յես բերում:

— Ո՞ք,—ասում ե,—մեռանք մինչև չափեցինք:

Թագավորը կտոր թափ ե տալի, մարգարիտը գուրս ե թըռչում:

Մնում ե գարմացած, թե ես Չախչախ թագավորն ինչքան հարուստ պետք ե լինի, վոր վոսկին, ալն ու մարգարիտը կոտով ե չափում:

Անց ե կենում մի քանի որ: Մի որ ել աղվեսը գալիս ե թագավորի մոտ խնամխոս, թե՛ Չախչախ թագավորը քու աղջիկն ուզում ե:

Թագավորն ուրախանում, աշխարհքով մին ե լինում:

— Իե գնացեք,—ասում ե,—շուտ արեք, հարսանիքի պատրաստություն տեսեք:

Թագավորի պայատում իրար են անցնում, հարսանիքի պատրաստություն են տեսնում, իսկ աղվեսը ջաղացն ե վազում:

Վազում ե ջաղացպանին աչքալույս տալի, թե՛ հապա թագավորի աղջիկը քեզ համար ուզել եմ: Պատրաստ կաց, վոր գընանք հարսանիք անենք:

— Վա՛յ, քու տունը քանդվի, այ աղվես. եզ ի՞նչ ես արել:

— Յես ով, թագավորի աղջիկը ով: Վոչ ապրուստ ունեմ, վոչ տուն ու տեղ, վոչ մի ձեռք շոր... Հիմի յես ինչ անեմ...

— Իու մի վախենա, յես ամեն բան կանեմ.—հանգստացնում ե աղվեսն ու յես վազում թագավորի մոտ:

Ընկնում ե պալատը.—Հայ հարա՛յ, Չախչախ թագավորը մեծ հանդեսով գալիս եր պսակվի: Ճամփին թշնամի գորքերը վրա տվին, մարդկանց կոտորեցին, ամեն բան տարան: Ինքը ազատվեց փախալ: Չորում մի ջաղաց կա, յեկել ե մեջը մտել: Շուտով շոր հասցրեք, ձի հասցրեք գա պսակվի, վոր գնա իր թշնամիներեց վրեժն առնի:

Թագավորն իսկույն թագավորավայել շորեր ե տալիս աղվեսին, հեան ել շատ ձիավորներ ե գնում, վոր պատվով ու փառքով իր փեսին պալատ բերեն:



60428-67

Գալիս են հանդեսով ջաղացի դռանը կանգնում: Աղվեսը ջաղացպանի քուրքը հանում է, թագավորի շորերը հագցնում, նրստեցնում է նժույգ ձիուն: Շրջապատված մեծամեծներով, առջևից ձիավորներ, յետևից ձիավորներ—եսպես հանդեսով բերում են թագավորի պալատը: Իր որումը պալատ չտեսած ջաղացպան—ըշկված, բերանը բաց մին չորս կողմն է նայում, մին հագի շորերին է նայում, խըշկոտում ու գարմանում:

— Ես ինչո՞ւ չտեսի նման դես ու դեն է նայում, աղվես ախպեր, — հարցնում է թագավորը: — Կարծես տուն չլինի տեսած, շոր չլինի հագած:

— Ձե, գրանից չի, — պատասխանում է աղվեսը: Նայում է ու համեմատում իր ունեցածի հետ, թե իր ունեցածը փորակե՞լ է փորակե՞լ...

Նստում են ճաշի: Տեսակ-տեսակ կերակուրներ են բերում: Ջաղացպանը չի իմանում՝ փորին ձեռք տա կամ ինչպես ուտի:

— Ինչո՞ւ չի ուտում, աղվես ախպեր, — հարցնում է թագավորը:

— Գալու ժամանակ ճամֆին փոր կողոպտեցին, նրա համար միտք է անում: Ձեք կարող յերեվակայել, տեր թագավոր, թե ինչքան բան տարան է վերջապես ինչ անպատվութուն էր եղ մեր թագավորի համար: Ի՞նչպես հաց ուտի, — պատասխանում է աղվեսը հառաչելով:

Բան չկա, դարդ մի անի, սիրելի փեսա, աշխարհք է, եղպես ել կպատահի, — խնդրում է թագավորը: — Այժմ հարսանիք է, ուրախանանք, քեֆ անենք:

Ու քեֆ են անում, ուտում, խմում, ամում, պար գալի. յոթն ուր, յոթ գիշեր հարսանիք անում: Աղվեսն էլ դառնում է քավոր: Հարսանիքից հետո թագավորը իր աղջկանը մեծ բաժինք է տալի ու հանդեսով ճամֆա դնում Ջախչախ թագավորի հետ:

— Կացեք, յես առաջ գնամ տունը պատրաստեմ, դուք իմ յետևից յեկեք, — ասում է քավոր աղվեսը ու վազ տալի:

Վազ է տալի վազ, տեսնում է՝ մի գաշտում մեծ նախիր է արածում:

— Ես ո՞ւմ նախիրն է:

Ասում են. — Շահ-Մարինը:

— Պա՛, Շահ-Մարի անունը ել չտաք, թագավորը նրա վրա բարկացել է, գորքով իմ յետևից գալիս է. ով նրա անունը տը-



վազ՝ գլուխը կտրել կտա: Վոր հարցնի թե ումն է, ասեր Չախ-
չախ թագավորինը. թե չե՛ վաչն եկել է ձեզ տարել:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ վոչխարի հոտը սարերը բլու-
նել է:

— Ես ումն է:

— Շահ-Մարինը:

Հովիվներին ել նույնն է ասում:

Վազ է տալի վազ. տեսնում է՝ ընդարձակ արտեր, հնձվոր-
ները միջին հնձում են:

— Ես ում արտերն են:

— Շահ-Մարինը:

Հնձվորներին ել նույն է պատվիրում:

Վազ է տալի վազ. տեսնում է խոտհարքներ:

— Ես ումն են:

— Շահ-Մարինը:

Սոտ հարողներին ել նույնն է ասում:

Հասնում է Շահ-Մարի պալատին:

— Շահ-Մար, ա՛ Շահ-Մար, — տեսնում ես են փոշին, վոր ամպի
նման բարձրանում է: Են թագավորն է գալիս մե՛ծ գորքով: Գու-
տունը չքանդվի, միամիտ նստել ես: Թագավորը քեզ վրա բար-
կացել է, գալիս է, վոր քեզ սպանի, տուն ու տեղը քանդի, տա-
կըն ու վրա անի, ունեցած-չունեցածդ ել թագավորական գրի: Մի
անգամ քեզ մոտ մի վառիկ եմ կերել. են ազուհացը դեռ չեմ
մոռացել: Վազեցի, յեկա, վոր քեզ իմացնեմ: Շուտ արա, գլխիդ
ճարը տես, քանի չի յեկել:

— Ի՞նչ անեմ, ուր գնամ, — հարցնում է սարսափած Շահ-Մա-
րը. տեսնում է, ճշմարիտ վոր հեռվից փոշի բարձրացնելով գա-
լիս է թագավորը:

— Ել ուր պետք է գնաս, շուտ արա, մտի ես դեզի մեջ,
թե չե յեկան...

Ես Շահ-Մարը մտնում է դեզի մեջ:

Այն ինչ աղվեսի յետևից գալիս են հարսանքավորները: Գա-
լիս են գուռնով, թմբուկով, յերգով, գորքով, հրացան արձակելով
ու ազմուկով:

Գալիս են Չախչախ թագավորն ու իր կինը վոսկեզո՛ծ կառ-
քի մեջ, նրանց առջևից ու յետևից անհամար ձիավորներ:

Հասնում են մի դաշտի: Տեսնում են՝ մե՛ծ նախիր է արա-
ծում:

— Ես ում նախիրն է, — հարցնում են ձիավորները:

— Չախչախ թագավորինը, — պատասխանում են նախրապան-
ները:

Անց են կենում: Հասնում են սարերին: Տեսնում են վոչ-
խարի սիպտակ հոտը սարերը բռնել է:

— Ես ումն է, — հարցնում են ձիավորները:

— Չախչախ թագավորինը, — պատասխանում են հովիվները:

Անց են կենում: Ընդարձակ արտեր:

— Ես ում արտերն են:

— Չախչախ թագավորինը:

Հասնում են խոտհարքներին:

— Ե՛ս ումն են:

— Չախչախ թագավորինը:

Ամենքը մնացել են դարմացած: Չախչախ թագավորն ինքն
ել քիչ է մնում խելքը թոցնի:

Եսպեսով գալիս են, հասնում Շահ-Մարի պալատներին:

Քավոր աղվեսն ընդունում է խնամիներին ու նորից սկսում
են քեֆը:

Հեյ ջան յերեխեք, քեֆ արեք դուք ել.

Եսպես հարսանիք յե՛րը կըլնի մեկ ել,

Վոր ջաղացպանը դառնա թագավոր,

Ջաղացը պալատ, աղվեսը քավոր:

ԱՆԽԵԼՔ ՄԱՐԴԸ

Ժամանակով մի աղքատ մարդ կար. վորքան աշխատում եր, վորքան շարձարվում եր, դարձյալ միևնույն աղքատն եր մնում: Հուսահատված մի ուր նա վեր կացավ, թե՛ պետք ե գնամ գտնեմ աստուծն, տեսնեմ յես յերբ պետք ե պրծնեմ այս աղքատությունից, ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գայլ պատահեց.

— Առաջ բարի, մարդ-ախպեր, ո՞ւր ես գնում,—հարցրեց գայլը:

— Գնում եմ աստուծ մոտ,—պատասխանեց աղքատը,— դարդ ունեմ ասելու:

— Դե վոր գնաս աստուծ մոտ,—խնդրեց գայլը,— ասա մի սոված գայլ կա, գիշեր ցերեկ ման ե գալիս սար ու ձոր, ուտելու բան չի գտնում, ասա մինչև յերբ պետք ե սոված մնա. վոր ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

— Լավ, ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա.

— Ո՞ւր ես գնում, ախպեր,—հարցրեց աղջիկը:

— Գնում եմ աստուծ մոտ:

— Յերբ վոր աստուծն տեսնես,—աղաչեց սիրուն աղջիկը,— ասա այսպիսի մի աղջիկ կա՝ ջահել, առողջ, հարուստ—բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան—ինչ պիտի լինի նրա ճարը:

— Կասեմ.—խոստացավ ճամփորդն ու գնաց. պատահեց մի ծառի, վոր թեև ջրափին եր կանգնած, բայց չոր եր:

— Ո՞ւր ես գնում, այ՛ ճամփորդ,—հարցրեց չոր ծառը:

— Գնում եմ աստուծ մոտ:

— Դե կանգնիր, մի յերկու խոսք ել յես ապսպրեմ,—խընդրեց չոր ծառը,— աստուծն կասես, այս ինչ բան ե. բուսել եմ



այս պարզ ջրի ափին բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում. յե՞րբ պետք է յես ել կանաչեմ:

Այս ել լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց մինչև գտավ աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ժայռին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած եր աստվածը:

— Բարի որ,—ասաց աղքատն ու կանգնեց աստծու առաջին:
— Բարով յեկար,—պատասխանեց աստված,—լինչ ես ուզում:

— Են եմ ուզում, վոր ամեն մարդի ել հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար չանես, մյուսին խավար. յես այնքան տանջվում, աշխատում եմ, ել չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, վոր իմ կեսի չափ ել չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

— Դե գնա, հիմի կհարստանաս, քո բախտը ավեցի, գնա վայելիր,—ասաց աստված:

— Ել բան ունեմ ստելու, տեր.—ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց և աղքատը շնորհակալու թխուն արավ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին.

— Ինձ համար լինչ ասաց աստված,—հարցրեց չոր ծառը:

— Ասաց, քո տակին վոսկի կա. մինչև այդ վոսկին չհանեն, վոր արմատներդ հողին հասնեն, դու չես կանաչիլ,—պատմեց մարդը:

— Ել ուր ես գնում, արի վոսկին հանիր ելի, համքեղ սգուտ կը լինի, համ ինձ, դու կը հարստանաս, յես ել կը կանաչեմ:

— Չե, յես ժամանակ չունեմ, շտապում եմ,—պատասխանեց աղքատը,—աստված ինձ բախտ տվեց, յես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ.—ասաց ու գնաց:

Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կըտրեց.

— Ի՞նչ լուր բերիր ինձ համար :

— Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ ել տխուր չես լինիլ, ուրախ յերջանիկ կլինես:

— Դե վոր այդպես է, արի դու յեղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,—թախանձեց աղջիկը ճամփորդին:

— Չե, յես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,—ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում եր սոված գայլը, հեռվից հենց վոր տեսավ ճամփորդին, վազեց առաջը կտրեց:

— Հը, աստված լինչ ասաց.

— Ախպեր, աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ ել պատահեցին. աղջիկն ապսպրեց, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն ել թե՛ լինչու յե գարուն, ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց—աղջկանն ասա իրան համար մի կյանքի ընկեր գտնիլ—կրախտավորվի, ծառին ել ասա, քո տակին վոսկի կա, պետք է այդ վոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, վոր կանաչես: Յեկա իրանց պատմեցի աստծու խոսքերը. ծառն ասաց, դե արի, հանիր վոսկին տար, աղջիկն ել թե՛ յես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի, չե, ախպեր, չեմ կարող, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ:

— Իսկ ինձ համար լինչ ասաց աստված,—հարցրեց սոված գայլը:

— Դեզ համար ել ասաց՝ սոված ման կըգաս՝ մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

— Ել քեզանից անխելք մարդ վո՞րտեղ գըտնեմ, վոր ուտեմ,—ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին:

ՍՈՒՏԱՍԱՆԸ

1

Լինում է, չի լինում մի թագավոր: Ես թագավորը իր յերկրումը հայանում է.

«Ով ենպես սուա ասի, վոր յես ասեմ՝ սուա է, իմ թագավորության կեսը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

— Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, վոր եստեղից մեկնում եր, յերկնքումը աստղերը խառնում:

— Կպտասհի,— պատասխանում է թագավորը:— Իմ պապն էլ մի չիրուխ ուներ, մի ձերը բերանին եր գնում, մյուս ձերը մեկնում, արեգակիցը վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

2

Գալիս է մի դերձակ: Ասում է.

— Ներողություն, թագավոր, յես վաղ պիտի գայի, ուշացա: Յերեկ շատ անձրև յեկավ, կայծակները արաքեցին, յերկինքը պատովեց, գնացել էյի կարկատելու:

— Հն, լավ ես արել,— ասում է թագավորը,— բայց լավ չեյիր կարկատել. ես առավոտ մի քիչ անձրև թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

3

Ներս է մանում մի աղքատ դյուղացի, կտըր կոնատակին:

— Գն ինչ ես ուզում, այ մարդ,— հարցնում է թագավորը:

— Ինձ մի կոտ վոսկի յես պարտ, յեկել եմ տանեմ:

— Մի կոտ վոսկի,— զարմանում է թագավորը:— Սուա ես ասում, յես քեզ վոսկի չեմ պարտ:

— Թե վոր սուա եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

— Չե, չե, ճշմարիտ ես ասում,— խոսքը փոխում է թագավորը:

— Ճշմարիտ եմ ասում, մի կոտ վոսկին տուր:

1907



ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐԸ

Մի մարդ զնաց հեռու՝ յերկիր աշխատանք անելու: Ընկավ մի գյուղ: Տեսավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կտորատում:

— Ախպեր, ասավ, ինչո՞ւ յեք ձեռով փայտ անում, միթե կացին չունեք:

— Կացինն ինչ բան է—հարցրին գյուղացիք:

Մարդը իր կացինը գոտից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը: Գյուղացիք այս վոր տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար:

— Տո՛ւ, յեկեք, տեսեք կացին ախպերը ինչ արավ:

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռիցն առան:

Կացինն առան, վոր հերթով կտորատեն իրենց փայտը:

Առաջին սրը տանուտերը տարավ: Կացինը վրա բերավ թե չէ՝ վտար կտրեց: Գոռալով ընկավ գյուղամեջ:

— Տո՛ւ, յեկեք, յեկեք, կացին ախպերը կատարել է, վտաս կծեց:

Գյուղացիք յեկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ձեռել: Ծեծեցին, տեսան, բան չգտավ, փայտերը կիտեցին վրան կրակեցին:


Իոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց: Յերը կրակն իջավ, յեկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է: Գոռացին:

— Վո՛յ, տղերք, կացին ախպերը բարկացել է, տեսեք՝ վոնց է կարմրել: Վորտեղ վոր է, մեր գլխին մի փորձանք կրերի: Ի՞նչ անենք:

Մտածեցին, մտածեցին ու վճռեցին տանեն բանար զցեն:

Տարան զցեցին տանուտերի մարազը: Մարազը լեքը դարման եր. զցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը յերկինք բարձրացավ:

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ յետևից՝ «Յեկ, ասածու սիրուն, կացին ախպորը բան հատկացրու»:



Ծ Ի Տ Ը

Լինում ե չի լինում մի ծիտ:

Մի անգամ ես ծախ վտար փուշ ե մանուկ: Գեա ե թոչում, դեն ե թոչում, տեսնում ե՝ մի պտուղ փետի յե ման գալի, թոնիր վառի, վար հաց թխի: Ասում ե.

— Նանի ջան, նանի, վտարս փուշը հանի, թոնիրդ վառի, յեա ել գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավր փուշը հանում ե, թոնիրը վառում:

Ծիտը գնում ե, յեա գալի, թե՛ իմ փուշը յեա տուր ինձ: Պառավր ասում ե.

— Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում ե, թե՛

— Իմ փուշը տուր, թե չե դեա թոչեմ, դեն թոչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թոչեմ:

Պառավր մի լոշ ե տալի: Ծիտը լոշն առնում ե թոչում:

Գնում ե տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն ե ուտում: Ասում ե.

— Հովիվ ախպեր, կաթն ինչ՞ու յեա անհաց ուտում: Ա՛յ լոշը ան, կաթնի մեջ բրդի, կեր. յեա ել գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում ե, յեա գալի, թե՛ լոշս տուր:

Հովիվը ասում ե.

— Կերա:

— Չե, — ասում ե, — իմ լոշը տուր, թե չե դեա թոչեմ, դեն թոչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թոչեմ:

Հովիվը ճարահատած մի գառն ե տալի: Առնում ե թոչում:

Գնում ե տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մապու չունեն, վար մորթեն:

Ասում ե. — Ի՞նչ եք մորթել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթե-

ցեք, քեֆ արեք: Յեա ել գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում ե, յեա ե գալի, թե՛ իմ գառը տվեք:

Ասում են. — Մորթել ենք կերել, վարտեղից տանք:

Սա կանգնում ե, թե՛ չե, իմ գառը տալիս եք, տվեք, թե չե, դեա թոչեմ, դեն թոչեմ, հարսին առնեմ, դուրս թոչեմ:

Ու հարսին առնում ե թոչում:

Գնում ե, գնում. գնում ե տեսնում՝ մի աշուղ միճամփով գնում ե:

Ասում ե. — Աշուղ ախպեր, առ ես հարսին պահի քեզ մոտ:

Յեա ել գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում ե, յեա գալի աշուղի առաջը կտրում, թե՛ իմ հարսն ինձ տուր:

Աշուղն ասում ե. — Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՛ չե. իմ հարսը տուր, թե չե՛ դեա թոչեմ, դեն թոչեմ, սաղիկդ առնեմ դուրս թոչեմ:

Աշուղը սաղը տալիս ե իրեն:

Սագն առնում ե, ուսը գցում, թոչում, մի տեղ նստում ե, սկսում ե ածել ու ճրավրտալով յերգել.

Ծընգլը, մընգլը,

Փուշիկ տվի, լոշիկ առա,

Լոշիկ տվի, գառնիկ առա,

Գառնիկ տվի, հարսիկ առա,

Հարսիկ տվի, սաղիկ առա,


Սաղիկ առա, աշուղ գառա,

Ծընգլը, մընգլը,

Ծիվ ծիվ:

Մին ել հանկարծ սաղը վեր ընկավ ջարդակց, ծիտը թռավ գնաց, հեքյաթն ել վերջացավ:

1907



ՈՒԼԻԿԸ

1

Սոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլ: Ուլին ամեն որ թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծքը լիքը տուն է գալի: Տուն է գալի, դուռը զարկում ու մկրկում, կանչում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ յեկել սարե սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դըռնակը բաց, ներս գամ յես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալի նրան ու կրկին գնում արոտ:

2

Ես բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ յեկել սարե սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դըռնակը բաց, ներս գամ յես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է լսում ու պատասխանում. «Ետ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Իմ մայրը ետպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Գու՞ ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուրը բաց չեմ անի...Գնա՛...չեմ ուզում քեզ...»

Ու գայրը հեռանում է, դնում:

3

Գալիս է մայրը, դուրը ձեռնում.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ յեկել սարե սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դըռնակը բաց, ներս գամ յես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ուլիկը դուրը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում.


— Գիտե՞ս, մայրիկ, ինչ յեղավ: Մի քիչ առաջ մինը յեկավ, դուրը զարկեց ու կանչում եր.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ.

Ասում եր՝ դուրը բաց արա: Ենպես հաստ ձայն ուներ: Ենպես վախեցա՞, ենպես վախեցա՞...Դուրը բաց չարի, ասի չեմ ուզում, գնա՛...

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևուկ ջան, ինչ լավ է յեղել, վոր բաց չես արել,—ասավ վախեցած մայրը:—Ետ գայրն է յեղել. յեկել է, վոր քեզ ուտի: Մյուս անգամ ել վոր դա, բաց չանես. ասա՛ գնա՛, թե չե իմ մայրը կգա, քեզ կսպանի իր սուր պողերով:

1907



ՊՈԶԱՏ ԱՂՎԵՍ

Լինում է չի լինում՝ մի պառավ: Ես պառավն իր եծը կըթում ե, կաթը վեր ե դնում, գնում ե ցախ ու փետ բերի, վոր կրակ անի, կաթն յեփի:

Մի աղվես գալիս ե, դուխը կոխում ե ամանը, կաթն ուտում:

Պառավը վրա յե հասնում, ցաքատով տալիս ե,—աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում ե, գնում ե մի քարի վրա կանգնում ե ու եսպես խնդրում.

— Տատիկ, տատիկ, պոչըս տուր, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ աղվես, վճրտեղ եյիր:

Պառավն ասում ե.

— Դե գնա իմ կաթը բեր:

Աղվեսը գնում ե կովի մոտ:

— Կովիկ, կովիկ, կաթ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչըս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ աղվես, վճրտեղ եյիր:

Կովն ասում ե.

— Դե գնա ինձ համար խոտ բեր:

Աղվեսը գնում ե արտի մոտ:

— Արտիկ, արտիկ, խոտ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչըս տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ աղվես, վճրտեղ եյիր:

Արտն ասում ե.

— Դե գնա ինձ համար ջուր բեր:

Աղվեսը գնում ե աղբյուրի մոտ:

— Աղբյուր, աղբյուր, ջուր տուր ինձ, ջուրը տանեմ ար-



տին տամ, արտը ինձ խոտ տա. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչա տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ ազվես, վորտեղ եյիր:

Աղբյուրն ասում է.

— Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

— Աղջիկ, աղջիկ, կուժը՞ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչա տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ ազվես, վորտեղ եյիր:

Աղջիկն ասում է.

— Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է չարչու մոտ:

— Չարչի, չարչի, ուլունք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչա տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ ազվես, վորտեղ եյիր:

Չարչին ասում է.

— Դե գնա ինձ համար ձու բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

— Հավիկ, հավիկ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ, պառավին տամ, պառավը պոչա տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ ազվես, վորտեղ եյիր:

Հավն ասում է.

— Դե գնա ինձ համար կուտ բեր:

Աղվեսը գնում է կավորի մոտ:

— Կավոր, կավոր, կուտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկն ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա. ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա. խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա. կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչա տա, կըցեմ, կըցմըցեմ, գնամ ընկերներին հասնեմ, վոր ինձ չասեն՝ պոչատ ազվես, վորտեղ եյիր:

Կավորի մեղքը գալիս է. մի բուռը կուտ է տալի: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու յե տալի. ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալի. ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի. կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի. ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի. խոտը տանում է կովին, կովը կաթն է տալի. կաթը տանում է պառավին, պառավը պոչա տալիս է իրեն, կըցում է, կըցմըցում, վազում, գնում իր ընկերներին հասնում:

1907

ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

1

Աքլորը մի որ կտուրը բարձրացավ, վոր աշխարհ տեսնի:
Վիզը ձգեց, յերկարացրեց, բայց բան չտեսավ: զիմացի
սարը խանգարում եր:

— Քուչի ախպեր, կարելի յե դու գիտենաս են սարի յե-
տեֆը ի՞նչ կա,—հարցրեց վերևից բակում պառկած շանը:

— Յես ել չգիտեմ,—պատասխանեց Քուչին:

— Հապա մինչև յերբ պետք և այսպես մնանք: արի գը-
նանք մի տեսնենք՝ աշխարհումս ի՞նչ կա, ինչ չկա:

Շունն ել համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան:

Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը
մնացին ենտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձ-
րացավ մոտիկ ծառին. քնեցին:

2

Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղմ:

Մի ազվես լսեց աքլորի ձայնը:

— Վան, սա վորտեղից դուրս յեկավ, ա՛յ լավ նախաճաշիկ,
—մտածեց ազվեսը ու վազեց:

— Բարի լուս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում ես կող-
մերը:

— Գնում ենք աշխարհ տեսնելու,—պատասխանեց աքլորը:

— Ո՛ր, ինչ լավ բան եք մտածել,—խոսեց ազվեսը:—Քանի
ժամանակ և յես ել մի կարգին ընկերի յեմ ման գալի: Ի՞նչ
լավ եր՝ պատահեցինք: Գե, ցած արի, վոր չուշանանք:

— Յես համաձայն եմ.—ասավ աքլորը.—տես, թե ընկերա
ել համաձայն և, ցած գամ՝ գնանք:

— Վորտեղ և ընկերդ:



— Են թփի տակին:

«Սրա ընկերն ել յերևի իր նման մի աքլոր կլինի. ես ել իմ ճաշը»,—մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ վոր շունը գուրս յեկավ, աղվեսը, պնւկ, փախավ, վնց փախավ:

— Կնց, աղվես ախպեր, մի վազի, մենք ել ենք գալի, ետպես ընկեր չի լինի,—ծառի գլխից ձայն ե տալի աքլորը:

1907

Ի ՈՍՈՂ ԶՈՒԿԸ

1

Լինում ե չի լինում մի աղքատ մարդ: Ես աղքատ մարդը գնում ե դառնում մի ձկնորսի շալակտար: Որական մի քանի ձուկն ե աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կնիկը:

Մի անգամ ել ձկնորսը մի սիրուն ձուկն ե բռնում, տալիս իր շալակտարին, վոր պահի, ինքն ել յետ շուրն ե մանում: Ես շալակտարը գետափին նստած՝ նայում ե նայում են սիրուն ձկանն ու միտք ե անում.

— Տեր աստված,—ասում ե,—սա ել, վոր մեզ նման շունչ կենդանի յե, դու ասա՝ սմ ել մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան ե հասկանում, ուրախություն կամ ցավ ե ըզգում՝ թե չե...

Հենց ես մտածելու ժամանակ ձուկը լեզու յե առնում.

— Լսի,—ասում ե,—մարդ-ախպեր: Ընկերներիս հետ յետ խաղում եյի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգուշ ընկա ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողն ինձ վորոնում ե ու լաց ե լինում, հիմի ընկերներս տըխրել կն: Յես ել, տեսնում ես, ինչպես եմ տանջվում. շունչս կըտրում ե ջրից գուրս: Ուզում եմ ել յետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ են պաղ ու պարզ ջրերում: Ենպես եմ ուզում, ենպես եմ ուզում...Յեկ խեղճ արի, ազատ արա ինձ, բնց թող, բնց թող գնամ...

Ետպես եր ասում ցնձ, շատ ցնձ ձենով, ցամաքած բերանը ըաց ու խուփ անելով:

Ես շալակտարի մեզքը գալիս ե, առնում ե յետ գցում գետը:

— Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քու ծնողը: Թող չտըրեն քու ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ: Ձկնորսը սաստիկ բարկանում ե շալակտարի վրա:

—Տն, ախմախ,—ասում է,—յես եստեղ ջրի մեջ թըրջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն անում ես ել յես ջուրը գցում... Դե գնա կորի, ել իմ աչքին չերեաս, ել իմ շալակտարը չես ես որից. գնա սովից մեռի:

Չեռի տոպրակն ել խլում է ու ճամփու դնում:

— Հիմի յես ուր գնամ, ինչ անեմ, վոնց պարեմ...—տարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը՝ դեպի տուն:

2

Ես տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալի մի մարդակերպ Հրեշ առաջը մի գեղեցիկ կով:

— Բարի որ, ախպերացու, եզ ինչ ես մոլորել, ինչ ես միտք անում,—հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխին յեկածը, թե ինչպես հիմի մնացել է անդործ, անճար ու չի իմանում, թե վոնց պիտք է ապրեն ինքն ու իր կնիկը:

«Լսի, բարեկամ,—ասում է Հրեշը:—Ես կաթնատու կովը ես քեզ կտամ յերեք տարվան ժամանակով: Ամեն որ ենքան կաթը տա, վոր քու կնիկն ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք: Յերեք տարին լրացավ թե չե, հենց են գիշերը կգամ ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք—իմ կովը ձեզ լինի, թե չե՝ յերկուսդ ել իմն եք, տանելու յեմ, ինչ ուզեմ կանեմ: Համաձայն ես»:

— Մի բան՝ վոր առանց են ել սովից մեռնելու յենք, մըտածում է աղքատը, կովը կտանեմ, ես յերեք տարին կապրենք, մինչև յերեք տարվա լրանալն ել ասոված վողորմած ե: Մի տեղից մի դուռը կը բացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

— Համաձայն եմ, ասում է ու կոփն առաջն անում, տանում տուն,

3

Յերեք տարի կթում են, լիովի ուտում, ապրում: Չեն ել նկատում, թե ինչպես անցավ յերեք տարին. և ահա հասնում է նշանակած օրը, վոր Հրեշն են գիշեր պիտի գա:

Մարդ ու կնիկ վերջալուսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թե ինչ պատասխան տան Հրեշին, կամ ով գիտի՝ ինչ կհարցնի նա. ով կիմանա Հրեշի միտքը:



— Ա՛յ թե ինչ դուրս կգա, յերբ մարդ Հրեշի հետ դործ քոնի... Հրեշի հետ հաշիվ ունենա... Հրեշից լավություն ընդունի...
— հառաչելով զղջում եյին մարդ ու կին, բայց անցկացածն անց եր կացել, ել հնար չկար: Իսկ զարհուրելի գիշերն արդեն վրա յեր հասնում:

Ես ժամանակ նրանց մոտենում ե մի անձանոթ գեղեցիկ յերիտասարդ:

— Բարի իրիկուն, ասում ե, ճամփորդ մարդ եմ. մութն ընկնում ե, յես ել հոգնած եմ, հյուր չեք ընդունի ձեր տանն ես գիշեր:

— Ընչի չե, ճամփորդ ախպեր, հյուրն աստծունն ե: Բայց մեզ մոտ վտանգավոր ե ես գիշեր: Մենք Հրեշից մի կով ենք առել են պայմանով, վոր յերեք տարի կլթենք, ուտենք, յերեք տարուց յետը գա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չե—իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել ե, ես գիշեր պիտի գա ու մենք ել չգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի մենք ենք մեղավոր, վայ թե քեզ ել քրտախ:

— Բան չկա, վորտեղ դուք՝ ենտեղ ել յես,—պատասխանում ե քոտարականը:

Համաձայնում են. հյուրը մնում ե:

Մին ել կես գիշերին դուրը զղրղում ե: Ո՞վ ե.—Հրեշը: Յեկել եմ վոր յեկել եմ, դե պատասխանս տվեք:—Ինչ պատասխան սարսափից մարդ ու կնգա լեզուն կապվում ե, մնում են տեղները քարացած:

— Մի վախենաք, յես ձեր տեղակ սրա պատասխանը կըտամ,—ասում ե յերիտասարդ հյուրը ու գնում ե դեպի դուրը:

— Յեկել եմ,—դուան յետեից ձայն ե տալի Հրեշը:

— Յես ել եմ յեկել,—պատասխանում ե ներսից հյուրը:

— Վճրտեղից ես յեկել:

— Ծովի են ափից:

— Ընչո՞վ ես յեկել:

— Կազ մոծակը թամբել եմ, վրեն նստել եմ, յեկել:

— Ուրեմն ծովը պտտիկ ե յեկել:

— Ի՞նչ պտտիկ արծիվը չի կարող մի ափից մյուսը թռչի:

— Ուրեմն արծիվը ճուտ ե յեկել:

— Ի՞նչ ճուտ. թեերի շվաքը քաղաք ե ծածկում:

— Ուրեմն քաղաքը շատ ե փոքրիկ:

— Ի՞նչ փոքրիկ. նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:
— Ուրեմն նապաստակը ձագ ե:
— Ի՞նչ ձագ. մորթին մի մարդու քուրք դուրս կգա, գըլխարկն ու տրեխն ել ավել:
— Ուրեմն մարդը թզուկ ե:
— Ի՞նչ թզուկ, ծնկան ձերին արլորը ծուղրուղու կանչի ձենը ախանջը չի հասնի:
— Ուրեմն խուլ ե:
— Ի՞նչ խուլ. սաբում վոր պախրեն խոտ պոկի նա կը լսի: Հրեշը մնում ե կապված, մոլորված. զգում ե, վոր ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, ել չի իմանում ինչ ասի, սուս ու փուս քաշվում, կորչում ե գիշերվա խավարի մեջ:
Մրանք նոր մեռած տեղներիցը յետ են գալի, ուրախանում աշխարհքովը մին են լինում: Հետն ել բացվում ե բարի լուսը, ե յերիտասարդ հյուրը վեր ե կենում, մնաք բարով ե ասում, վորք զնա իր ճանապարհը:
— Չենք թողնի, վոր չենք թողնի,—առաջը կտրում են մարդ ու կին.—դու վոր փրկեցիր մեր կյանքը, ասա ինչով յետ վճարենք քո լավությունը...
— Չե, անկարելի բան ե, պետք ե զնամ իմ ճանապարհը:
— Դե զոնե անուղ ասա, յեթե լավությունդ կորչի ու չկարողանանք յետ վճարել, զոնե իմանանք՝ թե ում ենք որհնելու...
— Լավությունը արն ու թեկուզ ջուրը զցի—չի կորչիլ: Յես հենց են թոտոզ ձուկն եմ, վորի կյանքը դու խնայեցիր... ասում ե անձանոթն ու չքանում ապշած մարդ ու կնգա աչքերից:

1908

ԽԵԼՈՔՆ ՈՒ ՇԻՄԱՐԸ

Յերկու ախպեր են լինում. մինը խելոք, մյուսը հիմար:
Սելոք ախպերը միշտ բանեցնում ու շարչարում է հիմարին:
Ենքան շարչարում է, վոր հիմարը հուսահատվում է, մի ուր
եւ կանգնում է թե՛

— Ախպեր եւ չեմ ուզում քեզ հետ կենամ, բաժանվում
եմ, իմ ռաժինը տաւր, գնամ շոկ ապրեմ:

— Լնձ,—ասում է խելոքը.—եզ հսոր եւ դու ապրանքը
ջուրը տար, յես կերը տամ. յերբ ջրից բերես, վնր ապրանքը
գոժս ստնի—ինձ, վորը դուրսը մնա—քեզ:

Եւ բաժանակն եւ լինում է ձմեռ:

Հիմարը համաձայնում է: Ապրանքը շուրն է տանում յետ
բերում: Ձմեռվան ցուրտ էր, մրսած անասուններ. հենց տար
գոժի դուռն են հասնում թե չե՛ իրար յետեից ներս են թափում:

Դռանը մտնւմ է մի հիվանդ քոսոտ մողի գերաններին քոր
անելիս: Են է մտնւմ հիմարին:

Ես հիմարը թողը վրդն է կապում, իր մողին տանում ծախե-
լու:

— Ա՛ մողի, արի, հեյ,—կանչելով գնում է:

Մի հին ավերակի մոտից անցնելիս եւ վոր ձեն է տալի—
մողի, արի, հեյ... ավերակի արձագանգը կրկնում է.

— Հեյ...

Հիմարը կանգնում է:

— Ի՞նձ հետ ես խոսում, հնձ...

Ավերակը ձայն է տալի.

— Հնձ...

— Մողին ուզում ես:

— Յես...

— Քանի մանեթ կտաս:

— Տնս...



— Հիմի կտանս, թե չե:

— Չե...

— Դե եզուց կգամ, վորտեղից վոր ե՛ ճարի:

— Արի...

Հիմարը համաձայնում է ու մողին ծախված համարելով՝
ավերակի դռանը կապում է, շվշվացնելով վերադառնում տուն:

Մյուս որն առափոռը վաղ վեր է կենում գնում փողերն
առնելու: Դու մի ասիլ՝ գիշերը գայլերը մողին կերել են: Գնում
է տեսնում՝ վոսկորները դես ու դեն ցրված ավերակի առջև:

— Հը՞,—ասում է,—մորթել ես կերել, հա՛:

— Հա՛...

— Չաղ եր, թե չե:

— Չե:

Հիմարը հստեղ վախենում է, կարծում է ավերակի մտքու-
մը կա, վոր իր փողը չտա:

— Եդ իմ բանը չի,—ասում է,—առել ես պրծել, յես իմ
փողի տերն եմ, բեր իմ փողը—տասը մանեթ գեղին վոսկի...

— Սկի...

Ես ել վոր լսում է հիմարը, բարկանում է, ձեռի փեռը
յետ է տանում, տուր թե կտաս, ավերակի խարխուլ պատե-
րին: Մին, յերկու զարկում է. պատերից մի քանի քար են վեր
ընկնում: Դու մի ասիլ՝ հնուց եղ պատում զանձ է յեղել պահած:
Քարերը վոր վեր են ընկնում՝ վոսկին թափում է հանկարծ ա-
ռաջը՝ լցվում:

— Այ եղպես...բայց եսքանն՝ ինչ եմ անում. տասը մանեթ
ես պարտ—իմ տասը մանեթը տուր, մնացածը քու փողն է, բն-
չիս է պետք...

Մի վոսկի յե վերցնում, գալի տուն:

— Հը՞, մողիդ ծախեցիր,—ծիծաղելով հարցնում է խելոք
ախպերը:

— Ծախեցի:

— Ո՞ւմ վրա:

— Ավերակի:

— Հետո, փող տվի:

— Իհարկե տվալ: Դեռ չեք ուզում տա, ամա ձեռիս փետո-
վը վոր մի քանի հասցրի, ինչ ունեք՝ առաջիս փռեց: Իմ տասը

մանեթը վեր կալա, մնացածն իրենն եր, հենց թողեցի կնակս փրս-
ված:

Ասում է ու վոսկին հանում ցույց տալի:

— Եդ վոսկեղ է,—աչքերը չորս է անում խելոք ախպերը:

— Ե՛հ, ցույց չեմ տալ, դու աչքածակ ես, կնքան կհավա-
քես, շալակս կտաս, վոր մեջքս կը կտորի:

Խելոքը յերդվում է, վոր մենակ ինքը կշալակի, միայն թե
տեղը ցույց տա:

— Բեր,—ասում է,—ձեռինդ ել ինձ տուր, մնացածի տեղն
ել ցույց տուր, վոր յես տեսնեմ տկլոր ես, քեզ համար նոր շո-
րեր առնեմ:

Հիմարը նոր շորերի անունը վոր լսում է՝ ձեռինն ել է տա-
լի ախպորը, տանում է մնացածի տեղն ել ցույց տալի: Խելոքը
վոսկին հավաքում է, բերում տուն, հարստանում, բայց ախպոր
համար նոր շորեր չի առնում:

Ես հիմարը ասում է, ասում է, վոր տեսնում է չի լինում,
գնում է դատավորի մոտ գանգատ:

— Պարոն դատավոր,—ասում է,—յես մի մողի ունեցի,
տարա ավերակի վրա ծախեցի...

— Հերիք է, հերիք,—ընդհատում է դատավորը.—ես հի-
մարը վոսկեղից յեկավ, վոնց թե մողին ավերակի վրա ծախեցի...—
վրեն ծիծաղում է ու դուրս անում:

Գնում է ու րիշներին գանգատվում, նրանք ել են վրեն ծի-
ծաղում:

Ու, ասում են, մինչև ետը ել խեղճ հիմարը կիսամերկ
ման է գալի, պատահողին գանգատվում, բայց վոչ վոր չի հա-
վատում, ամենքն ել ծիծաղում են վրեն, ու խելոք ախպերն ել
ծիծաղում է ամենքի հետ:

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստված բարի տա ձեզ ել, յերկու ախարն ել: Լինում են չեն լինում յերկու ազքատ ախար են լինում: Մտածում են ինչ անեն, վոնց անեն, վոր իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը զնա մի ունևորի ծառա մտնի, ոտճիկ ստանա, զրկի տուն:

Եսպես ել մեծը վեր ե կենում զնում մի հարուստի մտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին ել գարնան կըկվի ձեն ածելը: Ես հարուստը մի չլսված պայման ե զնում ծառային: Ասում ե՝ «մինչև են ժամանակը թե դու բարկանաս—դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե յես բարկանամ—յես տամ»:

— Յես վոր հազար մանեթ չունեմ վճրաեղից տամ,— ասում ե ծառան:

— Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղեն մին վախենում ե ես տարորինակ պայմանից, մին ել մտածում ե, թե ինչ պետք ե պատահի: Ինչ ուզում են անեն, յես եմ ու չեմ բարկանալ, պրծանք զնաց: Իսկ թե իրենք կըբարկանան, թող իրենք ել տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում ե լավ համաձայնում ե:

Պայմանը կապում են ու մտնում ե ծառայության:

Մյուս սրբ վաղ տերը վեր ե կացնում ծառային զրկում ե արտը հնձելու:

— Գնա՛, — ասում ե, — քանի լուս ե հնձի, վոր մութն ընկնի, կգաս:

Ծառան զնում ե ամբողջ սրբ հնձում, իրիկունը հոգնած գալիս ե տուն: Տերը հարցնում ե.

— Եդ ո՞ւր յեկար:

— Դե արևը մեր մտավ, յես ել յեկա:

— Չե, եզպես չի: Յես քեզ ասել եմ՝ քանի լուս ե պետք ե հնձես: Արևը մեր մտավ, բայց տես, նրա ախար լուսնյակը դուրս յեկավ: Սա ինչ պակաս ե լուս տալի...

— Եդ վոնց կլինի...—գարմանում ե ծառան:

— Հը՞, դու արդեն բարկանում ես,—հարցնում ե տերը:

— Չե, չեմ բարկանում... յես միայն ասում եյի՝ հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... կզկզում ե վախեցած ծառան ու զնում ե նորից հնձելու:

Հնձում ե, հնձում, մինչև լուսնյակը մեր ե մտնում: Բայց լուսնյակը մեր ե մտնում թե չե, դարձյալ արեղակն ե դուրս գալի: Ծառան ուժասպառ արտում վեր ե ընկնում:

— Վա՛յ, քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել, քու տված սոճիկն ել...—սխտում ե հայհոյել հուսահատված:

— Հը՞, դու բարկանում ես,—կանգնում ե զլիսին հարուստը: Յերը վոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե: Ել չասես թե քեզ հեռ առանց իրավունքի վարդեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե, ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հազար մանեթ չունեք, թե տար հոզին ազատ անեք, տասը տարի ել ես տեսակ մարդու ծառայելն անկարելի բան եր: Միտք ե անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ ե տալի հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

— Հը՛ր, ինչ արիր,—հարցնում ե փոքր ախարը: Ու մեծ ախարը նստում ե, զլուխն եկածը պատմում, ինչպես վոր պատահել եր:

— Բան չկա,—ասում ե փոքրը,—դարդ մի անի, դու տանը կաց, հիմի ել յես զնամ:

Վեր ե կենում հիմի ել փոքր ախարն ե զնում ծառա մըտնում ել նույն հարուստի մտ:

Հարուստը դարձյալ ժամանակը վորոշում ե մինչև գարնան կըկվի ձեն ածելը, ու պայման ե զնում, վոր յեթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու են որից ել ծառան ազատ ե:

— Չե, եդ քիչ ե,—հակառակում ե տղեն:—Թե դու բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայի:

— Լավ,—ուրախանում ե հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ ել փոքր ախարն ե մտնում ծառայության:

ՏԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՆ

Աստված բարի տա ձեզ ել, յերկու ախպորն ել: Լինում են չեն լինում յերկու ազքատ ախպեր են լինում: Մտածում են ինչ անեն, վոնց անեն, վոր իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տանը մնա, մեծը գնա մի ունևորի ծառա մտնի, ոտճիկ ստանա, զրկի տուն:

Եսպես ել մեծը վեր ե կենում գնում մի հարուստի մտ ծառա մտնում:

Ժամանակ նշանակում են մինչև մին ել զարնան կըկլի ձեն ածելը: Ես հարուստը մի չլսված պայման ե գնում ծառային: Ասում ե՝ «մինչև են ժամանակը թե դու բարկանաս—դու հազար մանեթի տուգանք տաս ինձ, թե յես բարկանամ—յես տամ»:

— Յես վոր հազար մանեթ չունեմ վճրտեղից տամ,— ասում ե ծառան:

— Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ձրի կծառայես:

Տղեն մին վախենում ե ես տարորինակ պայմանից, մին ել մտածում ե, թե ինչ պետք ե պատահի: Ինչ ուզում են անեն, յես եմ ու չեմ բարկանալ, պրծանք գնաց: Իսկ թե իրենք կը բարկանան, թող իրենք ել տուժեն իրենց զրած պայմանով:

Ասում ե լավ համաձայնում ե:

Պայմանը կապում են ու մտնում ե ծառայության:

Մյուս սրը վաղ տերը վեր ե կացնում ծառային զրկում ե արտը հնձելու:

— Գնա՛, — ասում ե, — քանի լուս ե հնձի, վոր մութն ընկնի, կզատ:

Ծառան գնում ե ամբողջ սրը հնձում, իրիկունը հոգնած գալիս ե տուն: Տերը հարցնում ե.

— Եդ ուր յեկար:

— Դե արևը մեր մտավ, յես ել յեկա:

— Չե, եզպես չի: Յես քեզ ասել եմ՝ քանի լուս ե պետք ե հնձես: Արևը մեր մտավ, բայց տես, նրա ախպեր լուսնյակը դուրս յեկավ: Մա ինչ պակաս ե լուս տալի...

— Եդ վոնց կլինի...— զարմանում ե ծառան:

— Հը՞, դու արդեն բարկանում ես, — հարցնում ե տերը:

— Չե, չեմ բարկանում... յես միայն ասում եյի՝ հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... կզկզում ե վախեցած ծառան ու գնում ե նորից հնձելու:

Հնձում ե, հնձում, մինչև լուսնյակը մեր ե մտնում: Բայց լուսնյակը մեր ե մտնում թե չե, զարձյալ արեղակն ե դուրս գալի: Ծառան ուժասպառ արտում վեր ե ընկնում:

— Վա՛յ, քու արտն ել հարամ ըլի, քու հացն ել, քու տված ոտճիկն ել... — սկսում ե հայհոյել հուսահատված:

— Հը՞, դու բարկանում ես, — կանգնում ե զլխին հարուստը: Յերը վոր բարկանում ես, մեր պայմանը պայման ե: Ել չասես թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում ե, ծառան կամ հազար մանեթ տուգանք տա, կամ տասը տարի ձրի ծառայի:

Ծառան մնում ե կրակի մեջ: Հազար մանեթ չունեք, թե տար հողին ազատ անեք, տասը տարի ել ես տեսակ մարդու ծառայելն անկարելի բան եր: Միտք ե անում, միտք, վերջը հազար մանեթի պարտամուրհակ ե տալի հարուստին, դառն ու դատարկ վերագառնում տուն:

— Հը, ինչ արիւր, — հարցնում ե փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նստում ե, զլուխն եկածը պատմում, ինչպես վոր պատահել եր:

— Բան չկա, — ասում ե փոքրը, — դարդ մի անի, դու տանը կաց, հիմի ել յես գնամ:

Վեր ե կենում հիմի ել փոքր ախպերն ե գնում ծառա մըտնում ել նույն հարուստի մոտ:

Հարուստը զարձյալ ժամանակը վորոշում ե մինչև զարնան կըկլի ձեն ածելը, ու պայման ե գնում, վոր յեթե ծառան բարկանա, հազար մանեթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի, թե ինքը բարկանա, հազար մանեթ տա ու են ուրից ել ծառան ազատ ե:

— Չե, եդ քիչ ե, — հակառակում ե տղեն: — Թե դու բարկանաս, դու ինձ յերկու հազար մանեթ տաս, թե յես բարկանամ, յես քեզ յերկու հազար մանեթ տամ կամ քսան տարի ձրի ծառայեմ:

— Լավ, — ուրախանում ե հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ ել փոքր ախպերն ե մտնում ծառայության:

Առաջօրը լուսանում է, ես ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս է գնում, տուն է դալի, ես ծառան դեռ քնած ե:

— Ա՛յ տղա, դե վեր կաց ե, որը ճաշ դառավ:

— Հը՞, բարկանում ես դու...— գլուխը վեր է քաշում ծառան:

— Ձե, չեմ բարկանում,— վախեցած պատասխանում է տերը. միայն ասում եմ՝ պետք է արար գնանք հնձելու:

— Հա, վոր եզ ես ասում վոչինչ, կդնանք, ինչ ես վոսպում: Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է արեխները հագնել: Տերը դուրս է գնում, ներս է դալի, սա դեռ արեխները հագնում է:

— Ա՛յ տղա, դե շուտ արա, հագի յե...

— Հ՛ը, հո չեմ բարկանում:

— Ձե, ո՞վ է բարկանում, յես միայն ուզում եյի ասել՝ ուշանում ենք...

— Հա, եզ ուրիշ բան է. թե չե՛ պայմանը պայման է:

Մինչև ծառան արեխները հագնում է, մինչև արան են գնում, ճաշ է դառնում:

— Ել ինչ հնձելու ժամանակ է,— ասում է ծառան,— տեսնում ես ամենքն ել ճաշում են, մենք ել մեր ճաշն ուտենք՝ հետո: Նստում են, ճաշն ուտում: Ճաշից հետո ել ասում է՝ «մշակ մարդիկ ենք, պետք է մի քիչ քնենք, հանգստանանք, թե չե՞»: Գլուխը կոխում է խոտերի մեջն ու քնում մինչև իրիկուն:

— Տո՛, վեր կաց ե, մթնեց ե, ուրիշները հնձեցին, մեր արար մնաց... Վա՛յ քու դեսը զրկողի վիզը կտարի, վա՛յ քու կերածն ել հարամ քի, քու արածն ել... Ես ինչ կրակի մեջ ընկա...— սկսում է դողդողալ հուսահատված տերը:

— Հը՞, չլինի՞ թե բարկանում ես,— գլուխը վեր է քաշում ծառան:

— Ձե, ո՞վ է բարկանում, յես են եյի ասում թե՛ մթնել է, տուն գնալու ժամանակն ա:

— Հա, եզ ուրիշ բան է, գնանք, թե չե հո մեր պայմանը զիտես. վա՛յ նրա մեղքը, ով բարկացավ:

Գալիս են տուն: Տեսնում են հյուր է յեկել:

Ծառային զրկում են թե՛ գնա վոչխար մորթի:

— Վե՛րը:

— Վորը կպատահի:

Ծառան գնում է: Մի քիչ հետո լուր են բերում հարուս-



տին, թե՛ հասի, վոր քու ծառան ամբողջ հոտդ կոտորեց: Ես հարուստը վազում ե, տեսնում ե՝ ճիշտ վոր, ինչ վոչխար ունի, բոլորը ծառան մորթել ե: Գլխին տալիս ե, գոռում:

— Ես ի՞նչ ես արել, այ անաստված, քու տունը քանդվի, ինչ իմ տունը քանդեցիր...

— Դու ասի՛ր՝ վոր վոչխարը պատահի մորթի, յես ել յեկա, բոլորը պատահեցին բոլորը մորթոտեցի—ուրիշ ավել պակաս ինչ եմ արել,— հանդիստ պատասխանում ե ծառան,—բայց կարծեմ դու բարկանում ես...

— Ձե, բարկանում չեմ, միայն ավստոս գալիս ե, վոր եսքանս ապրանքս փչացավ...

— Լնով, վոր բարկանում չեա, ել կծառայեմ: Հարուստը մտածում ե՝ ինչ անի, վոնց անի, վոր ես ծառայիցն ազատվի: Պայման ե կապել մինչև մին ել գարնան կկվի ձեն ածելը, այն ինչ դեռ նոր ես մտել ձմեռը, դեռ վճրտեղ ես գարունն ու կըկուն...

Միտք ե անում միտք, մի հնար ե մտածում: Կնոջը տանում ե անտառում մի ծառի վեր հանում ու պատվիրում, վոր «կուկու» կանչի: Ինքը գալիս ե ծառային տանում թե՛ արի գընանք անտառը վորտի: Հենց անտառն են մընում թե չե, կինը ծառի վրայից կանչում ե—«կուկու, կուկու»...

— Ընչ, աչքդ լուս,—ասում ե ծառային տերը. կկուն կանչեց, ժամանակդ լրացավ...

Տղեն գլխի յե ընկնում տիրոջ խորամանկութունը: — Ձե, ասում ե, ով ե լսել, վոր տարու ես յեղանակին, ձմեռվա կիտին, կկուն ձեն ածի, վոր սա ձեն ե ածում: Յես պետք ե ես կըկվին սպանեմ, սա ինչ կկու յե...

Ասում ե ու հրացանը քաշում դեպի ծառը: Տերը գոռալով ընկնում ե առաջը: — Վայ չղարկես, ատածու սիրուն...սե լինի քու պատահելու սրը, ես ինչ փորձանք եր, վոր յես ընկա մեջը...

— Հը՞, չլինի թե բարկանում ես... — Հն, ախպեր, հերիք եր. արի՛ ինչ տուգանք տալու յես տամ, քեղանից ազատվեմ: Իմ զրած պայմանն ե—յես ել պետք ե տուժեմ: Հիմի նոր եմ հասկանում ես հին խոսքը՝ թե «մարդ ինչ անի, իրեն կանի»:

Եսպես հարուստը խելոքանում ե, իսկ փոքր ախպերը մեծ ախպոր տված պարաքի թուղթը պատում ե, հազար մանեթ տուգանքն ել առնում ու վերադառնում տուն:

ԿՈՆԱՏ ԱՂԶԻԿԸ

Ժամանակով լինում են չեն լինում, մի քույր ու մի ախպեր են լինում: Գույրը ենքան սիրուն, ենքան շարմաղ ե լինում, ինչպես լուսի կտոր, անունն ել Լուսիկ:

Ախպերը պակավում ե, կնիկ ե բերում:

Սա տեսնում ե, թե ինչպես ամենքը սիրում են Լուսիկին, ու նախանձը, ոձի նման, բուն ե գնում սրտի մեջ: Մկսում ե Լուսիկին բամբասել ու լացացնել ամեն ոք, ամեն ոք...

Ախպերը ամեն կերպ աշխատում ե ուրախ պահի քրոջը: Մին տուն ե գալիս՝ հետը ծաղիկ ե բերում նրա համար, մյուս սրը միբղ, մի ուրիշ անդամ հագուստ:

Յեկ Լուսիկը մնում ե միշտ բարի, գեղեցիկ ու սիրված ամենքից: Հարսը նախանձից քիչ ե մնում տրաքի, մտածում ե, ինչ անի, վոնց անի, վոր մեջտեղից կորցնի Լուսիկին:

Մտածում ե, մտածում ե. մի ոք ել, յերը մարդը տանից գուրս ե գնում, վեր ե կենում, տան կահ-կարասին, աման-չամանը իբար գլխով ե տալի, շարդում ու գնում ձեռները՝ ծոցին դռանը կանգնում մինչև մարդու գալը:

Վոր տեսնում ե՝ մարդը գալիս ե, սկսում ե լաց լինել:

— Ա՛յ,—ասում ե,—ես ել քու սիրած քույրը, տանը ինչ ունեյինք-չունեյինք՝ շարդեց:

— Բան չկա, այ կնիկ, դրա համար ինչո՞ւ յես լաց լինում. եդ բոլորն առնելու բաներ են: Աման ե՛ կտրեց, նորը կառնենք, բայց Լուսիկի սիրտը վոր կտրենք, հետո ինչ անենք:

Կինը տեսնում ե, վոր ես մինը չեղավ: Մյուս անգամ, յերը մարդը գուրս ե գնում, նրա սիրած ձին տանում ե քշում, կորցնում ու գալիս ձեռները ծոցին կտրը կանգնում, մինչև մարդը յետ ե գալի:

— Ա՛յ,—ասում ե,—ես ել քու սիրած քույրը. քու են լավ ձին գուրս ե արել, կորցրել, մեզ եսպես տնաքանդ արել:

Մարդը ասում ե.

— Բան չկա. ձի յե, կորել ե, կաշխատեմ մի ուրիշ ձի ել կառնեմ, բայց հո չեմ կարող մի ուրիշ քույր առնել:

Չար կիրնը տեսնում ես, վոր ես անդամ ել գուր անցալ, ա-
վելի յե կատարում:

Մի գիշեր ել քնած ժամանակը իր յերեխին որորոցումը
մորթում ե, արնոտ դանակը թաքուն զնում քնած Լուսիկի
գրպանը:

Գիշերվա մի ժամանակը մաղերը շաղ ե տալի, յերեսը պո-
կում, ճրչում, ծղրտում:

— Վա՛յ, յերեխես, յերեխես...

Տանըցիք վեր են թռչում, տեսնում յերեխեն որորոցումը
մորթած: Մնում են սարսափած սասանած կանգնած: Ես սվ կը-
լինի արած, սվ չի լինիլ...

Հարսն ասում ե.

— Ել սվ պետք ե լինի. ես տունը մեղանից բացի հո ել
ուրիշ մարդ չի մտել. ման գանք, ում գրպանում արնոտ դանա-
կը գտնենք—նա կլինի:

Համաձայնում են: Ման են դալի, ու...արնոտ դանակը հա-
նում են Լուսիկի գրպանից:

Մնում են քար կտրած, բայց ել լինչ...

— Ես ել քու սիրած քույրը,—ճչում ե չար կիրնը ու յերե-
սը պսկում—յերեխես, յերեխես...

Առավոտը լուսի հետ աշխարհքով մին լուրը տարածվում ե:
Ժողովուրդը վրդավում ե, դատաստան ե պահանջում, մայրը
լալիս ե, դատաստան ե պահանջում, ու գեղեցիկ Լուսիկին քա-
շում են դատաստանի գուռը: Դատում են վճռում, կոները կըտ-
րում են ու ենպես, կոնատ, տանում հեռացնում, կորցնում են
հեռու, հեռու անտառներում:

Եսպես կոնատ, մեն-մենակ թափառում ե Լուսիկը անրնակ
անտառներում: Շատ թափառելուց թփերն ու փշերը հագի շորե-
րը տանում են, մնում ե սկլոր: Մոծակներն ու մոծեղները կծո-
տում են, ձեռ չի ունենում թեքշի, մանում ե մի ծառի փշակ:

Որերից մի որ թագավորի աղեն ես անտառը վորսի յե
գալի: Վորսի շները անտառում ես ու են կողմն են ընկնում, մի
ծառի շրջապատում ու սկսում են հաջել:

Թագավորի աղեն, իր հետի մարդիկը մտածում են, թե շը-
ները յերեխի գագանի վորջի կամ հետքի վրա յեն ընկել, ու ըս-
կըսում են շներին հիս աներ:

— Հիս մի անիլ ինձ վրա, թագավորի վորդի,—ձեն ե տա-
լի աղջիկը ծառի փշակից,—յես մարդ եմ, գաղան չեմ:

— Թե մարդ ես, զե գուրս արի:

— Չեմ կարող, մերկ եմ, ամաչում եմ:

Թագավորի աղեն ձիուց իջնում ե, վերարկուն հանում
տալի իր մարդկանց, վոր տանեն զցեն աղջկա վրա: Վերարկուն
տանում են, զցում են աղջկա վրա. գուրս ե գալի մի սիրուն,
մի աննման աղջիկ, վոր վոչ ուտես, վոչ խմես, կանգնես ու մը-
տիկ անես: Թագավորի աղեն հայիլ-մայիլ ե մնում:

— Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ, ի՞նչ ես շինում ես անտա-
ռում, ինչո՞ւ յես մտել ես ծառի փշակը...

— Յես մի եսպես աղջիկ եմ. աշխարհքումը մի ախպեր
ուրեմ. բայց ախպերն ել ե ինձ թողել, աշխարհքն ել...

— Ախպերդ ել ե քեզ թողել, աշխարհքն ել, բայց յես
չեմ թողնիլ,—ասում ե արքայորդին ու անում ե Լուսիկին
տանում իրենց տուն:

Տանում ե իրենց տունը, հորն ու մորը հայտնում, թե պետք
ե պսակվի նրա հետք:

— Թե սրա հետ կպսակվեմ, լալ, թե չե հո՛ ինձ մի փոր-
ձանքի կտամ:

Հերն ու մերն ասում են.

— Ա՛յ վորդի, աշխարհքի աղջիկները հո վերջացել չեն.
Թագավորների աղջիկներ կան, նազիր-վեզիրների աղջիկներ կան,
հարուստ, գեղեցիկ...Եղ կոնատ, սկլոր, անտեր աղջիկն սվ ե,
վոր դու գրան ուզում ես:

— Չե վոր չե...

Հերն ու մերը ճարահատված իրենց քաղաքի խելոք մարդ-
կանց հավաքում են, մի խորհուրդ են հարցնում, թե ինչպես
անեն իրենց վորդուն եղ կոնատ աղջկա հետ պսակեն, թե չե:
Խելոք մարդիկ ասում են.

— Մարդ ու կնկա բախտը վոր կա՛ սրտիցն ե: Չեր աղի
բախտն ել, յերեխի, եղ աղջիկն ե, վոր սիրտը կպել ե գրան: Աստ-
ված գրանց համար ել, եզպես ե բարի տեսել:

Ես վոր լսում են՝ հերն ու մերն ել համաձայնվում են, յոթն
որ, յոթը գիշեր հարսանիք են անում, ու թագավորի աղեն ա-
մուսնանում ե գեղեցիկ Լուսիկի հետ:

Մի առ ժամանակ անց ե կենում, ես թագավորի աղեն զնում
ե հեռու յերկիր: Գնալիս տանը պատվիրում ե, վոր յերբ կիրնը
ճնի՝ իրեն տեղեկութուն գրեն: Պատվիրում ե ու զնում:

Մրա գնալուց մի քանի ամիս անց ե կենում, Լուսիկը ազատվում ե, մի սիրուն, շարմաղ, վոսկեգանգուր տղա յե ծնում:

Թագավորն ու թագուհին ենալես ուրախանում են, ենալես ուրախանում են, վոր աշխարհքովը մին են լինում: Աչքալուս են գրում, նամակը տալիս են սուրհանդակին, ուղարկում են: Գու մի ասիլ, ես նամակ տանողը գնում ե ճանապարհին հյուր ե ընկնում Լուսիկի յեղբոր տունը ու գիշերը ֆում ե նրանց մոտ: Իրիկունը գրուց անելիս պատմում ե, թե՛ հապան, ետես-ետես մի բան ե պատահել ու հիմի աչքալուսի թուղթ եմ տանում թագավորի տղին:

Չար հարսը ետեղ գլխի յե ընկնում բանը: Գիշերվա մի ժամանակը վեր ե կենում, ես մարդի գրպանից նամակը հանում, կրակը գցում ու ինքը մի նոր նամակ գրում, գնում տեղը: Գրում ե, թե՛ հապա չես ասիլ, քու գնալուց յետը կինդ ծնեց՝ մի շան լակոտ բերով... ետես խայտառակիցինք աշխարհքի մեջ հիմի քեզ իմացնում ենք—գրի ինչ անենք, ինչ չանենք:

Սուրհանդակը ես նամակը տանում ե տալի թագավորի տղին: Կարգում ե թագավորի տղեն ու շատ շատ վշտանում: Հորն ու մորը նամակ ե գրում, թե՛ իմ բախտն ել յերևի եղ ե յեղել. ինչ վոր աստված տվել ե—ինն ե, պահեցեք, կնկանս ել մի թթու խոսք չասեք, մինչև յես գամ:

Գրում ե, նամակը տալիս սուրհանդակին, յետ գրկում: Ես սուրհանդակը վերագարձին գալիս ե կրկին իր հյուրատունը ու ելի գիշերը ֆում ե նրանց մոտ:

Չար հարսը գիշերվա մի ժամանակն ելի վեր ե կենում, սրա գրպանից թագավորի տղի նամակը հանում, գցում կրակը, ինքը մի նորը գրում, գնում տեղը: Գրում ե, թե՛ իմ կինն ինչ վոր ծնել ե, իր ծնած շան լակոտը գոշիցը կկապեք ու դուրս կանեք, կկորցնեք, վոր յես չգամ ու մեր տանը տեսնեմ, թե չե ինձ մի փորձանքի կրտամ:

Հերն ու մերը ես նամակը վոր ստանում են, ֆում են զարմացած: Ասում են.

— Ես ինչ բան ե. ինքը բերով մեր կամքին հակառակ հետը պտակվեց, հիմի ել գրում ե, թե՛ դուրս արեք...

Շատ են տխրում, շատ ե մեղքները գալի, բայց ինչ վոր գրել եր՝ պետք ե կատարելին:

Իերում են յերեխին կապում են մոր գոշիցը, լաց են լինում, որհնում են ու իրենց տանիցը դուրս են անում:



Յերեխեն գոշիցը կապած՝ Լուսիկը գնում է լալով: Անց է կենում խոր ձարեր, մութ անտառներ, անբնակ դաշտեր, բնկնում է մի անջուր, ամալի անապատ:

Ես անապատում՝ ծարավ, ջրչոր՝ գնում է, գնում է, շատ է գնում թե քիչ է գնում, շատն ու քիչն ել աստված գիտի— հասնում է մի ջրհորի: Նայում է ջրհորի մեջը, աչքին թվում է, ինչ ջուրը մոտիկ է: Կոանում է թե ջուր խմի՝ յերեխեն գրկիցը բնկնում է ջրհորի մեջը: Ճշարով ջրհորի ես կողմն է թռչում, են կողմն է թռչում: Հանկարծ յետևից մի ձեն է գալի:

— Մի վախիլ, աղջիկ ջան, մի վախիլ, հանի...

Յեա է նայում, տեսնում՝ սպիտակ միբուքը մինչև գոտեկաակը մի ձերուհի: Ասում է.

— Վճնց հանեմ, չեմ կարող, պապի ջան, ձեռներ չունեմ:

— Հանի, հանի, աղջիկ ջան, ձեռներ ունես, մեկնի...

Լուսիկը կոները մեկնում է, ձեռները բացվում են, ու յերեխին ջրհորից հանում է: Յեա է դանում թե շորհակալություն անի, տեսնում է՝ ձերուհի չկա, աներեւութացել է:

Սրան ետեղ թողնենք իր յերեխի հեա ու հիմի ունից տեղեկություն տանք: Հիմի տեղեկություն տանք թագավորի աղիցը:

Թագավորի տղեն ստարությունից վերագոծում է, ամեն բան իմանում է ու տուն չի մանում. գոնիցը յեա է դանում, գնում է աշխարհքե աշխարհք ման գա, վոր իր կնկանն ու յերեխին գանի:

Գնում է ման է գալի. ես կողմը հարց ու փորձ, են կողմը հարց ու փորձ, մի տեղ պատահում է մի մարդու:

— Բարի սր:

— Ասածու բարին:

— Ո՞ւր, առաջ բարի:

— Ի՞մ քրոջն եմ ման գալի:

— Գե մին չլինենք, յերկու լինենք, յես ել իմ կնկանն ու յերեխիս եմ ման գալի:

Ընկերանում են, գնում են ման են գալի, մի տարի, յերկու տարի, յերեք տարի, վոչ տեղն են իմանում, վոչ տեղեկություն: Վերջը գալիս ես թագավորի տղեն մի մեծ ճանապարհի վրա քարվանսարա յե պահում, բնկերն ել իր տուն ու տեղը, իր կնկանը բերում է ու ետեղ ապրում են, վոր գուցե թե գնացող-յեկողից մի բան իմանան:

Մի անգամ ես քարվանսարի գունն է գալի մի աղքատ կին իր փոքրիկ տղի հետ:

Թագավորի տղեն իր բնկերոջը ասում է.

— Յեկ ներս կանչենք ես աղքատ կնկանն ու իր յերեխին: Սրանք լավ հեքյաթներ են գիտենում ու լավ ել պատմում են. հեքյաթ կը պատմի, մենք ել դարդի տեր մարդիկ ենք, կլսենք, գիշերն անց կկենա:

Ընկերոջ կնիկն են կողմից հակառակում է թե՛ մենք հաղիվ ենք տեղավորվում, զրանց վնրտեղ բերենք:

Թագավորի տղեն վոր շատ խնդրում է, ներս են թողնում մուրացկան կնկանն ու իր յերեխին: Մերը պատի տակին կուչ է գալի, յերեխեն ել կողքին: Թագավորի տղեն ասում է.

— Քուսներս չի տանում, քուրիկ, հեքյաթից, առակից կլմանաս, պատմի լսենք, գիշերն անց կենա:

— Յես վոչ հեքյաթ գիտեմ, վոչ առակ,—պատասխանում է աղքատը,—յես մի ճշգրիտ պատմություն գիտեմ, մի պատահած դեպք է շատ հետաքրքրական. թե կուզեք, պատմեմ, լսեցեք:

— Լավ, եդ պատմի:

Ու աղքատ կինը սկսում է պատմել:

— Մի ժամանակ մի աշխարհքում լինում են չեն լինում, մի քույր ու մի ախպեր են լինում: Ախպերը պոսակվում է, կին է բերում, մի շար ու նախանձոտ կին:

Ճանախիկն են կողմից բարկանում է.

— Հը՛, սկսեց գլխիցը դուրս տալ:

— Ա՛յ կնիկ, ինչ ես ուզում, ինչ՞ու յես խանգարում, թոց պատմի,—նեղանում է մարդը:

— Պատմի, քույրիկ, դու պատմի...

Աղքատ կնիկը շարունակում է իր հեքյաթը.

— Քույրը մի գեղեցիկ ու բարեսիրտ աղջիկ է լինում, ամենքը սիրում են նրան: Ախպերն ել ամեն տուն գալով միշտ նրա համար մի բան է բերում՝ կամ ծաղիկ, կամ միրգ, կամ հազուստ է կամ թե չէ՝ մի քաղցր խոտք է ասում: Նախանձում է շար հարսը, հնարքներ է մտածում, թե ինչպես անի, վոր կորցնի գեղեցիկ աղջկանը:

— Հը, դե տեսեք ինչ է ասում ես անդգամը...—կրկին մեջ է բնկնում տանախիկնը:

— Ա՛յ կնիկ, ինչ պատահեց քեդ. թոց լսենք, տեսնենք ինչ է ասում: Դու շարունակի, քույրիկ, սրան ականջ մի դնիլ: Աղքատ կնիկը շարունակում է.

— Հնարքներ ե մտածում չար հարսը: Մի որ տան կահ-
կարասին ե ջարդում ու դնում անմեղ աղջկա վրա, մյուս որը
մարդու սիրած ձին ե բաց թողնում կորցնում ու մեղադրում
քրոջը. տեսնում ե բան չի գտնում, վերջը իր յերեխին որսորցի
մեջ մորթում ե, դանակը դնում քնած աղջկա զրպանը...

— Ձեռք կտրի, լիբը, անդգամ, ու՛վ ե իմացել, վոր մերն իր
յերեխին մորթի,—ճշում ե տանտիկինը:

— Ի՞նչ ես ընդհատում,—դուում ե մարդը կնոջ վրա:—
Թող պատմի, չես տեսնում՝ ինչ հետաքրքրական բան ե պատմում:
Աղքատը շարունակում ե.

— Դատաստան են անում, կտրում են անմեղ աղջկա
կոնները ու ենպես կոնատ հալածում, կորցնում հեռու, հեռու...

Հալածված թափառում ե նա անձանթ անտառներում: Են
յերկրի թագավորի տղեն որերից մի որ վարսի յե դուրս գալի են
անտառները, գտնում ե գեղեցիկ աղջկանը ու պսակվում ե նրա հետ:
Թագավորի տղեն հեռու յերկիր ե գնում: Նրա գնալուց հետո կի-
նը ծնում ե մի վոսկեզանգուր յերեխա: Աչքալուսի նամակ են
զրում հորը: Նամակատարը ձամփին հյուր ե ընկնում կոնատ
աղջկա յեղբոր տունը:

Չար հարսը զիշերը փոխում ե նամակը, նոր նամակ ե զը-
րում թագավորի տղին, թե՛ «քու կնիկը ծնել ե, շան լակոտ ե
բերել»...

— Սուս, հերիք եր ինչ վոր տակից-զլխից դուրս տվիր,
դուրս կորի գնա,—կատաղում ե տանտիկինը:

— Ախպեր, կնկանդ ասա հանգիստ կենա, լսենք, տեսնում
ես ինչ պատմություն ե անում,—խնդրում ե թագավորի տղեն
ընկերոջը:

Աղքատը շարունակում ե.

— Թագավորի տղեն կարդում ե փոխած նամակը, վշտա-
նում ե, բայց ելի զրում ե, վոր պահեն, մինչև ինքը կգա: Նա-
մակատարը վերադարձին կրկին հյուր ե ընկնում նույն տունը:
Ես նամակն ել ե փոխում չար հարսը ու զրում ե, թե՛ «նամակն
ստանալուն պես իր ծնածը կրծքիցը կապեցեք ու դուրս արեք
իմ կնոջը»: Ես նամակն ստանում են ու դուրս են անում մորն
ու յերեխին:

— Ես վերտեղից յեկավ ես շունը,—աղաղակում ե տանտի-
կինը:

— Բավական ե,—գոռում են վրեն մարդն ու թագավորի
տղեն:—Պատմի, քույրիկ, հետո...հետո...

Աղքատը շարունակում ե.

— Հետո թագավորի տղեն տուն ե գալի: Լսում ե ինչ ե
պատահել, յետ ե դառնում, գնում ե իր կնոջն ու յերեխին ման
գալու: Պատահում ե կոնատ աղջկա յեղբորը: Նա ել դուրս եր
յեկել իր քրոջը ման գալու: Ընկերանում են ու ման են գալի:
Շատ են ման գալի, չեն գտնում: Գալիս են, մեծ ձանապարհի
վրա մի քարվանսարա յեն պահում...

— Սուտ ե ասում,—գոչում ե տանտիկինը: Իսկ մարդն ու
թագավորի տղեն ապուշ կտրած սպասում են վերջին: Յեվ աղ-
քատ կինը հասնում ե վերջին.

— Սոված ու ծարավ թափառում ե հալածված մերը իր
վոսկեզանգուր յերեխի հետ, վերջը աղքատ, տկուր գալիս ե, հաս-
նում եղ քարվանսարայի գուռը...Ախպերն ու ամուսինը մեղքա-
նում են ներս կանչում, խնդրում են, վոր մի հեքյաթ ասի ի-
րենց համար»...

— Վայ...—ուշաթափվում ե տանտիկինը:

— Լուսիկ ջան...միթե դու յես...վեր են թռչում թագավորի
տղեն ու ընկերը, Լուսիկ ջան...

— Հն, ձեր Լուսիկն եմ յես, անա իմ ախպերը, անա իմ
ամուսինը, անա իմ վոսկեզանգուր յերեխան, ե անա չար հարսը...

Լեզվով չի պատմվիլ, թե ինչպես են ուրախանում ամենքը,
վոր իրար վորտնում էյին ու գտնում են վերջապես:

Իսկ չար հարսին կապում են կատաղի ձիու պոչից ու բաց
են թողնում արձակ դաշտերում: Վորտեղ արյունն ե կաթում,
ենտեղ փուշ ու տատասի ե դուրս գալի, վորտեղ արտասուենքն ե
թափվում, ենտեղ լիճ ե գոյանում:

ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է չի լինում՝ մի աքլոր է լինում:
Ես աքլորը քուջուջ անելիս մի վոսկի յե գանում:
Կտուրն է բարձրանում, ձեն տալի.

— Ծուզրուզն, փող եմ գանել...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում է՝ զը-
նան խլեն բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում բերում:

Աքլորը կանչում է.

— Ծուզրուզն, թագավորը ինձանով ապրեց...

Թագավորը վոսկին յետ տալիս է իր նազիր-վեզիրին, ա-
սում է.

— Յեա տարեք իրեն ավեք, թե չե աշխարհքովը մին կը-
խայտառակի մեզ ետ անպիտանը...

Նազիր-վեզիրը վոսկին տանում են յետ տալի աքլորին:

Աքլորն ելի կտուրն է բարձրանում.

— Ծուզրուզն, թագավորն ինձանից վախեց...

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

— Գնացեք, —ասում է, —բռնեցեք եղ սրիկային, գլուխը
կտրեցեք, յեփեցեք բերեք ուտեմ, պրծնեմ դրանից:

Նազիր-վեզիրը գնում են աքլորին բռնում, վոր տանեն: Տա-
նելիս կանչում է.

— Ծուզրուզն, թագավորն ինձ հյուր է կանչել...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, վոր յեփեն, ձեն
է տալի:

— Ծուզրուզն, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է զրկել...

Յեփում են բերում թագավորի առաջն են գնում, կանչում է.

— Թագավորի հետ սեղան եմ նստել, ծուզրուզն...

Թագավորը շապով վերցնում է կուլ տալի: Կսիրգով զը-
նալիս կանչում է.

— Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուզրուզն...



Թագավորը վոր տեսնում է՝ կուլ ալեց, ել չի ձենը կտրում,
իր նազիր-վեզիրին հրամայում է թուրքները հանած պատրաստ
կենան, վոր մին ել ձեն ամի—գարկեն:

Նազիր-վեզիրը թրերը հանած պատրաստ կանգնում են մի-
նը ես կողմը, մյուսը են:

Աքլորը վոր թագավորի փորն է հասնում, ձեն է տալի.

— Լուս աշխարհքումն էյի, մութ տեղ եմ ընկել, ծուղորու-
ղն...

— Չարկեցեք...—հրամայում է թագավորը:

Նազիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը
պատում:

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգ-
նում ձեն տալի.

— Ծուղորուղն...

1909

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակով մի մարդ ու մի կին են լինում:

Ես մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում:

Մարդը կնկանն է ասում հիմար, կնիկը մարդուն, ու միշտ
կովելիս են լինում:

Մի որ ել մարդը մի քանի փութ յեղ ու բրինձ է առնում,
տալիս մշակի շալակը, տանում առն:

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, վոր ասում են հիմար ես, չես հավատում, եսքան
յեղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել բերել. հորդ
քելեխն ես տալիս, թե տղիդ հարսանիքն ես անում:

— Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք, այ կնիկ, ի՞նչ ես խոսում,
տար պահի բարեկենդանի համար է:

Կնիկը հանդատանում է, տանում է պահում:

Անց է կենում մի առժամանակ, ես կնիկը սպասում է,
սպասում է, բարեկենդանը գալիս չի: Մի որ ել շեմքումը նստած
է լինում, տեսնում է մի մարդ վռազ-վռազ փողոցով անց է կե-
նում: Ձեռը դնում է ճակատին ու ձեն տալի.

— Ա՛խպեր, ախպեր, հալա մի կանգնի:

Տղեն կանգնում է:

— Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չես:

Անցվորականը նկատում է, վոր ես կնկա ծալը պակաս է¹⁾,
ասում է՝ հա՛ ասեմ, տեսեմ ինչ է դուրս գալի:

— Հա, յես եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ինչ ես ասում:

— Ես եմ ասում, վոր մենք քո ծառան հո չենք, վոր քո յե-
ղըն ու բրինձը պահենք: Ինչ վոր պահեցինք, հերիք չէր...չես
ամաչո՞ւմ...Ընչի՞ չես գալի քո ապրանքը տանում...

— Դե ել ի՞նչ ես նեղանում, քույրիկ ջան, յես ել հենց
դրա համար եմ յեկել, ձեր առնն էյի ման գալի, չեյի գտնում:

— Դե արի տար:

¹⁾ Ծալը պակաս—խելքից քիչ պակաս:

Ես մարդը ներս ե մտնում, սրանց յեղն ու բրինձը շալա-
կում ու կրունկը դեսն ե անում, յերեսը գեպի իրենց գյուղը:

Մարդը գալիս ե տուն, կնիկը ասում ե.

— Հա, են բարեկենդանն յեկավ, իր բաները իրեն սեցրի
տարավ:

— Ի՞նչ բարեկենդան... Ի՞նչ բաներ...

— Ա՛յ են յեղն ու բրինձը... Մին ել տեսնեմ՝ վերեից գա-
լիս ե. մեր տունն եր ման գալի. կանչեցի, մի լավ ել խայտա-
ռակ արի, շալակը տվի տարավ:

— Վայ քու անխելք տունը քանդվի, վոր ասում եմ հիմար
ես— հիմար ես ելի... Վճիր կողմը դնաց:

— Ա՛յ են կողմը:

Ես մարդը ձի յե նստում, ընկնում բարեկենդանի յետեից:
Ճանապարհին բարեկենդանը յետ ե մտիկ անում, տեսնում ե՝
մի ձիավոր քշած գալիս ե: Գլխի յե ընկնում, վոր սա են կնկա
մարդը պետք ե լինի:

Գալիս ե հասնում իրեն:

— Բարի որ, ախպերացու:

— Աստծու բարին:

— Հո ես ճամփովը մարդ չի անց կացավ:

— Անց կացավ:

— Ի՞նչ ուներ շալակին:

— Յեղ ու բրինձ:

— Հա, հենց եղ եմ ասում: Ի՞նչքան ժամանակ կլինի:

— Բավական ժամանակ կլինի:

— Վոր ձին քշեմ՝ կհասնեմ:

— Վճրաեղից կհասնես, դու ձիով, նա վտտով: Մինչե քու
ձին չորս վտտը կփոխի— մին, յերկն, յերեք, չորս— նա յերկու
վտտով մեկ-յերկն, մեկ-յերկն, մեկ-յերկն, շուտ-շուտ կգնա,
անց կկենա:

— Բա ինչպես անեմ:

— Ինչպես պետք ե անես. ուզում ես, ձիդ թող ինձ մտա,
դու ել նրա պես վտտով վաղի, դուցե հասնես:

— Հա, եղ լավ ես ասում:

Վեր ե գալիս, ձին թողնում սրա մոտ ու վտտով ճանապարհ



ընկնում: Մա հեռանում է թե չե, բարեկենդանը շալակը բարձրում է ձիուն, ճամփեն ծուռում, քշում:

Ես մարդը վտավ զնում է, գնում է, տեսնում է չհասավ, յես է դառնում: Յես է դառնում տեսնում՝ ձին ել չկա: Գալիս է տուն: Նորից սկսում են կովել, մարդը յեղ ու բրնձի համար, կնիկը ձիու:

Մինչև որս ել մարդ ու կնիկ կովում են դեռ: Մա նրան է ասում հիմար, նա սրան, իսկ բարեկենդանը լսում է ու ծիծաղում:

1911

ՍՈՒՏԼԻԿ ՎՈՐՍԿԱՆԸ

Հորս կնուներով, մորս ծնունդով, վեր կացանք մի որ հինգ ու վեց հոգով, թրով-թվանքով վորսի գնացինք: Հաղին եր, Հյուզին եր, Չատին եր, Մատին եր, հերս եր, յես եյի, գնացինք վորսի...

Սարեր, ձորեր դուզ գնացինք, վորտեղ վորս կար՝ սուս ու վուս գնացինք, վորտեղ ահ եր՝ կուզ ու կուզ գնացինք...

Գնացինք, գնացինք, շատ թե քիչ, մին ել տեսներք յերեր լիճ. յերկուսը ցամաք, մընի մեջ ել իսկի ջուր չկա: Մին ել, ը՛նը՛, մտիկ տանք, վոր ես անջուր լճում լողում են ճշում յերեր հաս սիպտակ բազ, յերկուսը սատկած են, մինն ել կենդանի չի:

— Հաղի, տ՛ներ հա, տ՛ներ:

Թե՛ թվանք չունեմ:

— Հյուզի, տ՛ներ հա, տ՛ներ:

— Յես ել չունեմ:

— Չատի... Մատի...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հորս ձեռին կարճ ու յերկար, հաստ ու բարակ մի վես կար. յերեսն տռավ, նշան դրեց, մին ել՝ տրաք, վոր կրակեց... նա կրրակեց, յես զարկեցի. վոր զարկեցի՝ փոփեց եսպես—մեն թեք հինգ զազ ու կես...

— Հաղի, գանակ...

Թե՛ գանակ չունեմ,

— Հյուզի, գու...

— Յես ել չունեմ:

— Չատի, Մատի...

— Մենք ել չունենք:

— Բա ի՞նչ անենք...

Հերս ել ունի, բերան չունի:

Ես անբերան գանակը քաշեցինք: Հաղին մորթեց, չկարաց.

Հյուզին մորթեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց, յես քաշեցի մորթեցի:

Մորթեցի, վեր գցեցի. բազ—մի ասիլ, մի գոմնչ ասա: Հադին շալակեց, չկարաց, Հյուզին շալակեց, չկարաց, Չատին չկարաց, Մատին չկարաց, հերս ել չկարաց, յես շալակեցի: Շալակեցի, գնացինք:

Գնացինք, գնացինք, հասանք մի տեղ, մին ել տեսնենք յերեք գեղ, յերկուսի տեղն իսկի չի յերևում, մընումն ել իսկի շենլիկ չկա: Ես անշեն գյուղում դես ման յեկանք, դեն ման յեկանք, մի տուն գտանք, մեջը յերեք պառավ, յերկուսը մեռած, մընի բերնումն ել շունչ չկա:

— Տղերք, ասինք, յեկեք բաղով փլավ անենք:

Ես անշունչ պառավը գնաց դես ման յեկավ, դեն ման յեկավ, կես բրինձ գտավ, յերեք պղինձ, յերկուսը ծակ, մինն ել իսկի տակ չունի:

Ջուրը լցրինք ես անտակ պղինձը, մեջը ածինք բազն ու բրինձը, անկրակ յեփեցինք: Յեփեց, յեփեց, միսն ու բրինձը գնացին, մնաց ջուրը:

Վորսից յեկած սոված մարդիկ, վրա յեկանք, կերանք, կերանք. վոչ աչքներս բան տեսավ, վոչ բերաններս բան մտավ:

1910



ՅԵԴԵՄԱԿԱՆ ԾԱՂԻԿԸ

Ժամանակով մեր աշխարհքում մի վաճառական է լինում: Ես վաճառականը ունենում եմ մի աղջիկ՝ անունը Ծաղիկ: Ծաղիկ վոր ծաղիկ, ենքան քնքույշ, ենքան նախշուն, ենքան սիրուն է լինում:

Հերը անչափ սիրելիս է լինում աղջկանը: Մի անգամ էլ ստարություն զնալիս հարցնում է.

— Ի՞նչ կուզես քեզ համար բերեմ:— Թե՛ յեղեմական ծաղիկը կուզեմ ինձ համար բերեմ:

— Լավ,—ասում է,—կրերեմ:

Գնում է, աշխարհքից աշխարհք անց է կենում, իր առուտուրն անում է, իր գործը պրծնում, ուզում է աղջկա համար էլ յեղեմական ծաղիկը գտնի, վոր տուն գա: Գեա է հարցնում յեղեմական ծաղիկ, դեն է հարցնում յեղեմական ծաղիկ, վոչով չի իմանում, թե ինչ բան է յեղեմական ծաղիկը կամ վորտեղ է բացվում: Վերջը մի ձեր մարդ է պատահում: Ես ձեր մարդը մի ճամփա յե ցույց տալի. ասում է՝ ես ճամփով վոր գնաս, եսինչ տեղը կգտնես քո հարցրած ծաղիկը: Բայց զգույշ կաց սիպտակ դեփց, նա յեղեմական ծաղիկն հսկում է:

Հոր սիրտ է: Ծերունու ցույց տված ճամփեն բռնում է գրնում: Գնում է, գնում, շատ է գնում թե քիչ, գուրս է գալիս ենտեղ, վորտեղ բացվում է յեղեմական ծաղիկը: Հենց հասնում է ծաղիկը պոկում է թե չե, մի հողմ, մի փոթորիկ է վեր կենում, փոթորիկի հեա հայտնվում է մի հրեշ: Մարդ ասես՝ մարդ չի, գազան ասես՝ գազան չի, բայց գազանի նման մոնչում է.

— Ո՛ւր պոկեցիր իմ ծաղիկը...քո մահն է հիմի...

— Քո մահն է հիմի...—ձեն է գալի ամեն կողմից:

Մարդը վոչ սեռած, վոչ կենդանի հրեշի առաջն է ընկնում:

— Ներթի,—ասում է,—նվ հղոր...իմ աղջիկն եր ուզել...

— Կնեքեմ,—կանչում է հրեշը,—միայն են պայմանով, վոր

եղ աղջիկը ինձ տաս:

— Համաձայն եմ:

— Վոր համաձայն ես՝ քեզ եմ բախշում քո կյանքը: Գնա: Հենց վոր ձեր տան դիմացի սարը սիպտակի—եղ իմ նշանն է՝ կգամ Ծաղիկին տանելու:

Ինչ մի ասիլ Սիպտակ դեր ինքը հրեշն է, վոր կա:

Վաճառականը վերադառնում է տուն: Աղջիկը միամիտ առաջն է վազում, վզովը փաթաթվում: Հերը համբուրում է, յեղեմական ծաղիկը տալիս իրեն, իսկ պատահած դեպքն ու իր խոստումը թաղցնում է: Թաղցնում է, չբայց ինքն իր մեջ միտք է անում ու տխրում: Գանի որերն անց են կենում, ենքան ավելի յե տխրում: Մի առավոտ էլ վեր է կենում տեսնում իրենց տան դիմացի սարն արդեն [սիպտակի է: Լաց է լինում: Պատճառը հարցնում են. էլ չի կարողանում ծածկի, պատմում է, թե՛ հապա չեք ասիլ եսպես-եսպես բան է պատահել, յես էլ խոսք եմ տվել, հիմի Սիպտակ դեր գալու յե Ծաղիկին տանի:

— Բան չկա, հայրիկ,—ասում է Ծաղիկը,—գուր լաց մի լինի, յես կերթամ Սիպտակ դեր հեա, ինչ կլինի կլինի:

Այնինչ Սիպտակ դեր արդեն դուռը կտրել է ու մոնչում է,

— Ո՛ւր է Ծաղիկն, ուր...ինձ ասը...

Մոնչում է ու նրա ստոր շնչից դողում են ծառերը, աշխարհքը գունատվում. ինչ պետք է անելին խեղճ մարդիկը: Չուքված, զարդարված, յեղեմական ծաղիկը ձեռքին գուրս են բերում Ծաղիկին հանձնում են Սիպտակ դերին, վոր չարախինդ սուլոցով ու ազան փոռոցով, սառով, սեռով, հողմի թևով իսկույն հափշտակում է տանում: Տանում է Մասիսի մեծ վիհը: Ենտեղ, Մասիսի են մեծ վիհում, են անմատչելի, միշտ մոայլ ու միշտ սառն աշխարհքում կանգնած եր իր սառցեղեն ապարանքը: Են ապարանքից իջնում եր նա, սառով ու սարսափով աշխարհքը պատում, հափշտակում տանում ամեն կյանք ու կենդանություն: Ծաղիկին էլ տանում է, փակում են բյուրեղյա ապարանքում:

Եսպես ամիսներ են անց կենում: Մի անգամ էլ, զարնան սկզբին, յերը Սիպտակ դեր տանից գուրս է գնում, աղջիկը վեր է կենում փախչում: Յեա է գալի դեր, տեսնում է՝ Ծաղիկը չկա: Կասազում է, հավաքում է իր բուրբ դիվական ուժն ու մրբիկի նման սուբալով, ոճի նման սուլեղով՝ ընկնում է յետեփց: Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է լինում հասած: Յեա է նայում տեսնում է Սիպտակ դեր գալիս է: Գալիս է, վոնց է գալիս, աստված յես ու հեռու անի: Սարսափից ճչում է, ոգնություն

ե կանչում: Կանչելու հետ, աստծու հրամանով, առաջը մի գու-
որն ե բացվում: Են դռնովը մտնում ե սարի մեջն, ու կրկին
գուռը փակվում ե դեի առաջին:

Ավելի յե կատաղում Միպտակ դեր. իր լայն թեերով բամ-
փում ե Արագածի զագաթին ու մոնչում:

— Ո՛ւր ե Ծաղիկն, ուր...ինձ ա՛սուր...

Մա ետեղ թող մոնչա, մենք գնանք Ծաղիկի յետեից, աես-
նենք են կախարդական դոնից վոր մտավ, ինչ յեղավ:

Ծաղիկը են կախարդական դոնից ներս ե մտնում թե չե,
դուրս ե գալի մի դրախտական այգի, վորտեղ հագարավոր ձայ-
ներ յերգում են:

Ձմրուխտ պալատում, վրսիի դագաղում,
Պառկած ե չարի ուժով կախարդված,
Պառկած ե Արին վոչ մեռած, վոչ քուն,
Ու աշխարհքն ամեն սե սուգ ե մտած:

Պառկած ե մինչև որը ցանկալի,
Են պայծառ որը, յերբոր նա կըգա,
Կըգա նոր կյանքով ու նոր սիրով լի,
Կարտավի անուշ ու համբույր կտա:

Առաջ ե գնում Ծաղիկը, հանկարծ այգին լցվում ե զվարճ
այմուկով, ու տարածվում են ուրախ յերգի ձայները:

Ահա յեկավ, հասավ չքնաղ
Իր թագուհին, իր սիրելին,
Հիմի կելնի պաղ դագաղից
Մեր քաջ Արին—Արմանելին:

Հիմի կելնի թագավորը,
Հըգոր Արին—Արմանելին
Ու կըժպտան վառ աչքերը
Վողջ աշխարհքին, ծաղիկն, ծըլին:

Հիմի կընկնի կախարդանքը
Չար թշնամու, Միպտակ դեի,
Հիմի կըգա դալար կյանքը,
Բույրը ծագկի, շողն արևի:



Յեւ ճիշտ վոր, Ծագիկը գնում է, ինչ է տեսնում: Այգու մեջ մի զմրուխտ պալատ, պալատի մեջ վոսկի դագաղ, դագաղի մեջ մի ջահել, գեղեցիկ յերիտասարդ, վոր վոչ քնած է, վոչ մեռած շունչը վրեն—հաղիվ արըփում է: Տեսնում է թե չե, սիրտը փուռ է գալի, ել չի զիմանում, լաց է լինում ու կռանում է համբուրում: Արտասուքի կաթիլներն ընկնում են յերիտասարդի յերեսին. յերիտասարդը հանկարծ բաց է անում աչքերն ու վեր է կենում կանգնում, ինչպես են զբախտում բուսած սոսիներից մինը:

Դու մի ասիլ՝ հենց ինքը Արին—Արմանելին է, վոր կա:

— Ո՞վ ես դու, սիրուն աղջիկ,—հարցնում է Արին—Արմանելին,—և ինչպես ընկար ես աշխարհքը:

Ու Ծագիկը կանգնում պատմում է իր գլխին յեկածը, թե ինչպես ինքը գերի յեր յեղած Սիպտակ դեին, վոր այժմ յետեվիցն է ընկել ու հալածում է իրեն:

— Լսում եմ, լսում եմ նրա դաժան ձենը,—պատասխանում է Արին—Արմանելին:—Ինձ էլ նա յե կախարդել ամիսներ առաջ ու գցել ես մահանման քնի մեջ: Եսպես է անում ամեն տարի: Պետք է եսպես ել մնայի, մինչև մինը խորտակեր նրա չար կախարդանքը: Դու յեղար եղ մինը: Այժմ յես դուրս կգնամ նրա դեմ:

Ասելն ու անելը մին է լինում: Առնում է կայծակի թուրը ու դուրս է գալի: Յերկու թշնամի ուժերը պատահում են իրար. բացվում է որհասական կռիվը: Զարկում են զարկվում—յերկինք ու գետինք իրար են խառնվում: Մութն ամպերում մոնչում է Սիպտակ դեը, Արին—Արմանելին անավոր վորոտում ու շողացնում է կայծակի թուրը. յերկիրը դողում, գլրդում է հիմքից: Կռվի վերջում պարտված, ջարդված Սիպտակ դեը վշշալով ու թշշալով, լացով ու թացով քաշվում է նորից իր մռայլ թագավորութունը, Մասիսի են մեծ վինը, դարձյալ փակվում է իր բյուրեղյա սառն ապարանքում: Աշխարհքը մնում է գեղեցիկ հաղթողին:

Ու աստվածային հանդես է բացվում Արաքսի հովիտում: Արին—Արմանելին պսակվում է Ծագիկի հետ: Բնությունն առատորեն փռում է իր փարթամ վարդերն ու զարդերը, ինս ու ջինս, մրջյուն ու թռչուն իրար են խառնում իրենց զվարթ աղ-

մուկն ու աղագակը, խաղն ու տաղը, ամենի վրա հոյակապ կամար է կապում կանաչ-կարմիրը—ծիածանը, իսկ նրանց վերև ճառագում աշխարհքովը մին ժպտում է զարնան կենսատու արեը:

Ու եսպես կրկնվում է ամեն տարի, վորովհետև ամեն տարի Սիպտակ դեը կախարդում է Արին—Արմանելին ու հափշտակում է սիրուն Ծագիկին:

1909

ԱՆԲԱՆ ՀՈՒՌԻՆ

Լինում է չի լինում մի կնիկ: Ես կնիկը մի աղջիկ է ու-
նենում անունը Հուռի: Մի ծուլը, անշնորհք աղջիկ: Որը մինչե
իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է.

Բամբակը կորեղոտ է:

Մաստակ պիտի, վոր ծամեմ,

Կըտերը տիտիկ անեմ,

Անցնողին միտիկ անեմ.

Ուտեմ, խմեմ,

Մըթնի, բընեմ:

Հարեաններն անունը գնում են Անբան Հուռի: Ինչ մերն է՝
աղջկանը գովելով ման է գալի.— լիզբը զգող, լիզբը մանող, համ
խըճճող, համ խճուճը հանող, ձեռը-կարող, հուռնցող-թխող, յեփող-
թափող, մի խոսքով՝ հուռի-հրեղեն, մատները վռակի:

Ես գովասանքը գնում մի յերիգասարդ վաճառականի ական-
ջըն է ընկնում: Ես յերիտասարդ վաճառականն ատում է՝ իմ ու-
ղածն էլ հենց սա յե, վոր կա: Գլխապատառ գալիս է Անբան
Հուռնին ուզում է, հետը պսակվում, տանում իրենց տունը: Մի
քանի ժամանակից յետը մի տասը-քսան բեռը բամբակ է անում
տալիս կնիկանը, թե՛ յես գնում եմ հեռու տեղեր առուտուրի, դու
եղ ես բամբակը զգի, մանի, զամ տանեմ ծախեմ, հարստանանք:
Անբան Հուռին է, իրեն համար մաստակ ծամելով ման է
գալի: Մի որ էլ գետի ափովն անց կենալիս լսում է, վոր գորտե-
րը կռկում են.

— Փեփեկ... Կեկեկ... Փեփեկ... Կեկեկ...

— Վոլ, աղջի Փեփեկ, Կեկեկ, — ձեն է տալի Անբան Հուռին,
վոր բամբակը բերեմ ձեզ տամ՝ կըզգեք...

— Բեք, բեք, բեք...

Անբան Հուռին ուրախանում է: Գնում է բամբակը կրում
բերում, ածում գետը:



— Դե գզեցեք, մանեցեք: Մի քանի սրբից յեաք կգամ մանածը կտանեմ, վոր ծախենք:

Գնում ե մի քանի սրբից յետ ե գալի:
Գորտերն ելի կոկոսում են:

— Փեփեկ-Կեկեկ... Փեփեկ-Կեկեկ...

— Աղչի Փեփեկ, Կեկեկ, դե մանածը բերեք:

Գորտերը շարունակում են կոկոսալ իսկ մանածը չեն բերում:

Հուռին մին ել վոր նայում ե, աչքովն ընկնում ե գետի ափերին ու քարերին փաթաթված կանաչ մուրը:

— Վճեյ,—ասում ե,—քոռանամ յես, տես, համ գզել ու մանել են, համ խալիչա յեն գործել փրենց համար:

Ձեռը ճակատին ե դնում ձեն տալի:

— Դե վոր խալիչա յեք գործել, մեր բամբակի փողը բերեք:—Ձեն ե տալի ու վտար փոխում ե, մտնում ջուրը: Հանկարծ վտար առնում ե մի կոշա բանի: Հանում ե տեսնում՝ մի կտոր վոսկի: Փեփեկին ու Կեկեկին շնորհակալություն ե անում, վոսկու կտորը փեշը դնում, գալիս տուն: Մարդն ել առուտուրի տեղիցն ե գալիս: Գալիս ե տեսնում՝ իրենց թարեքին մի մեծ վոսկու կտոր:

— Ա՛յ կնիկ, ես ի՞նչ վոսկի յե:

Թե՛ բա չես ասիլ բամբակը Փեփեկի ու Կեկեկի վրա ծախեցի. բամբակի փողն ե:

Մարդը վճեց ե ուրախանում, ենպես ել դուք ուրախանաք: Ջոքանչին հրավիրում ե, ընծաներ ե տալի, գովում ե, շնորհակալություն ե անում, վոր եսպես խելոք, շնորհքով, աշխատասեր աղջիկ ե մեծացրել: Քեֆ ե սարքում. նստում են քեֆի:

Ջոքանչը խորամանկ կին ե լինում: Իմանում ե, թե բանը ինչպես ե պատահել. վախենում ե փեսեն ելի աղջկանը գործ հանձնի, ու զազտնիքը բացվի: Քեֆի լավ ժամանակը մի բզեզ ե ներս մտնում ու բըռոացնելով պտավում սենյակում: Ես զոքանչը վեր ե կենում գլուխ ե տալի բզեզին: Ասում ե.

— Բարով յեկար, մորքուր ջան, վճեց ես. վճրաեղ ես, եսքան ժամանակ չես յերևում... Ախր քեզ ո՞վ եր ասում եղքան բան անես, վոր եղ որն ընկնես...

Փեսեն մնում ե զարմացած: Ասում ե.

— Այ մեր, խելագարվեցի՛ր, քեզ ի՞նչ պատահեց. եղ բզեզին եղ ի՞նչ ես ասում—մորքուրս վորն ե...

Ջոքանչը թե.—Այ վորդի, քեզանից ինչ թագցնեմ, դու ել իմ վորդին ես: Ձես ասիլ ես բզեզն իմ մորքուրն ե: Խեղճը շատ աշխատասեր կնիկ եր: Ամբողջ որն աշխատում եր, շատ աշխատելուց կուչ յեկավ, պատիկացավ, ենքան պատիկացավ, վոր դառավ բզեզ: Մեր ցեղն եսպես ե: Շատ աշխատասեր ենք: Բայց աշխատելուց պատիկանում, բզեզ ենք դառնում:

Ես վոր փեսեն լսում ե, վախից քիչ ե մնում պոռը ճաքի. են ե լինում վոր են, արգելում ե Հուռնին ձեռն ել բանի չտա, վոր մորքուրի նման բզեզ չդառնա:

1909

ԿԻԿՈՍԻ ՄԱՅԸ

1

Մի աղքատ մարդ ու կնիկ են լինում, ունենում են յերեք աղջիկ:

Մի որ հերը աշխատելիս է լինում, ծարավում է, մեծ աղջկանը ջուրն է դրկում: Ես աղջիկը կուժն առնում է գնում աղբյուրը: Աղբրի գլխին մի բարձր ծառ է լինում: Ես ծառը վոր տեսնում ե՝ իրեն-իրեն միաք է անում.

— Հիմի վոր յես մարդի գնամ ու մի վորդի ունենամ, անունն ել գնենք Կիկոս: Կիկոսը գա ես ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի...

— Վայ, Կիկոս ջան, վայ...

Տեղն ու տեղը ծառի տակին նստում ե՝ սկսում է սուզ անել.

Գընացի մարդի,

Ունեցա վորդի,

Գըդակը պոպոզ,

Անունը Կիկոս.

Վեր յելավ ծառին,

Յած ընկավ քարին...

Վայ Կիկոս ջան,

Վայ վորդի ջան...

2

Մերն սպասում է սպասում, տեսնում է չեկավ, միջնեկ աղջկանն է դրկում: Ասում է.

— Գնա մի տես, քույրդ ընչի ուշացավ:

Միջնեկ աղջիկն է գնում:

Մեծ քույրը սրան վոր հեռվից տեսնում ե՝ ձենն ավելի յե բարձրացնում:

— Արի, արի, անբախտ մորքուր, տես քո Կիկոսն ինչ յեղավ:



— Ի՞նչ Կիկոս:

— Բա չես ասի՛լ՝

Գընացի մարդի,
Ունեցա վորդի,
Գըզակը պոպոզ,
Անուհը Կիկոս.
Վեր յելավ ծառին,
Յած ընկավ քարին...
Վայ Կիկոս ջան,
Վայ վորդի ջան...

— Վայ Կիկոս ջան, վայ,— գոռում է միջնեկ քույրը, նըստում է մեծ քրոջ կողքին ու սկսում են միասին սուգ անել:

3

Մերն սպասում է սպասում, տեսնում է չեկան, պատիկ աղջկանն է զրկում: Ասում է.

— Աղջի, մի գնա տես քույրերդ ինչ յեղան: Գնացին, յես չեկան:

Հիմի պատիկ աղջիկն է գնում: Գնում է Վտեսնում՝ յերկու քույրերն էլ աղբրի գլխին նստած լաց են լինում.

— Գնա ընչի՛ յեք լաց ըլում:

Մեծ քույրը, թե՛ բա չես ասի՛լ՝

Գընացի մարդի,
Ունեցա վորդի,
Գըզակը պոպոզ
Անուհը Կիկոս.
Վեր յելավ ծառին,
Յած ընկավ քարին...
Վայ Կիկոս ջան...
Վայ վորդի ջան...

— Վայ քու մորքուրին. Կիկոս ջան, վայ, սա էլ է գլխին տալիս ու մյուսների կողքին նստում, ձեն-ձենի տալիս:

4

Մերն սպասում է սպասում, տեսնում է աղջիկները չեկան, ինքն է գնում:

Հեռվից իրենց մորը տեսնում են թե չե՛ յերեք աղջիկն էլ կանչում են.

— Արի, արի, անբախտ տատի, տես թոռանդ գլուխն ինչ է յեկել:

— Ի՞նչ թոռ, այ աղջկերք, ի՞նչ է պատահել: Մեծ աղջիկը, թե՛ բա չես ասի՛լ, այ մեր.

Գընացի մարդի,
Ունեցա վորդի,
Գըզակը պոպոզ,
Անուհը Կիկոս.
Վեր յելավ ծառին,
Յած ընկավ քարին...
Վայ Կիկոս ջան,
Վայ վորդի ջան...

— Վայ, քոռանան քու տատի աչքերը, Կիկոս ջան.— մերն էլ ծընկանը զարկում է, նստում է աղջիկների կողքին, սկսում է նրանց հետ սուգ անել:

5

Մարդը տեսնում է կնիկն էլ գնաց աղջիկների յետևից ու սա էլ չեկավ: Ասում է՝ մի գնամ տեսնեմ ես ինչ պատահեց, վոր սրանք իրար յետևից գնացին մնացին ազրբումը:

Վեր է կենում գնում:

Կնիկն ու աղջկերքը հենց սրա գլուխը հեռվից տեսնում են թե չե, ձեն են տալի.

— Արի, արի, անբախտ պապի, արի տես քու Կիկոսի զըլուխն ինչ է յեկել... վայ քու Կիկոսին...

— Ի՞նչ Կիկոս, ի՞նչ էք ասում,— զարմանում է մարդը:

Մեծ աղջիկը, թե՛ բա չես ասի՛լ, այ հեր,

Գընացի մարդի,
Ունեցա վորդի,
Գըզակը պոպոզ,
Անուհը Կիկոս.
Վեր յելավ ծառին,
Յած ընկավ քարին...
Վայ Կիկոս ջան,
Վայ վորդի ջան...

— Վայ, Կիկոս ջան,— ծնկներին տալիս են ու սուգ են անում մեր ու աղջկերք:

Մրանց միջի խելոքը հերն է լինում: Ասում է.

— Այ հիմարներ, ինչ եք նստել ետեղ ու սուգ եք անում: Ինչքան ել սուգ անեք, ինչքան ել լաց ըլեք, հո Կիկոսն ել կենդանանալու չի: Վեր կացեք, յեկեք գնանք մեր տունը, մարդ կանչենք, ժամ ու պատարագ անենք, Կիկոսի քելեխը տանք: Լացով ինչ պետք է անենք: Աշխարհքի կարգ է, ինչպես եկել է, հնարեա ել պետք է գնա:

Դու մի ասիլ՝ սրանց ունեցած-չունեցած չորս վտանանին մի յեզն է լինում, ունեցած փռչին ել մի քթոց ալյուր:

Գալիս են ես յեզը մորթում, ես մի քթոց ալյուրն ել հաց թխում, ժողովուրդ են կանչում, ժամ ու պատարագ են անում, Կիկոսի քելեխն ուտեցնում, վոր նոր հանգստանում են:

1913

ՁԱԽՈՐԴ ՓԱՆՈՍԻ ՇԵՔՅԱԹԸ

Փամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս: Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ վոր բռնում է՝ ձախ է գնում: Դրա համար ել անունը դնում են Ձախորդ Փանոս: Ունեցած-չունեցածը մի լուծ յեզն է լինում, մի սել ու մի կացին:

Մի որ յեզնիքը սելում լծում է, կացինը առնում գնում անտառը փետի: Անտառում ես Փանոսը միտք է անում, թե՛ մի բան վոր ծառը կտրելուց յետը մին ել նեղություն պետք է քաշեմ ահազին զերանը գետնից բարձրացնեմ պեմ սելի մեջը, ալեկի լավ է՝ հենց սելը լծած բերեմ ծառի տակին կանգնեցնեմ, վոր ծառը կտրեմ թե չե, ընկնի մեջը:

Ասածն արած է:

Յեզներով սելը բերում է մի մեծ ծառի ներքե կանգնեցնում, ինքը անցնում վերի կողմը, կացինը քաշում— թրը՛խկ հա թրը՛խկ: Շատ է քաշում թե քիչ, ետ ել ինքը կիմանա, ծառը ճրճոռալով գալիս է դարկում, տակոփն անում սելը ջարդում, յեզներն ել հետը: Փանոսը մնում է ապշած կանգնած: Ի՞նչ պետք է անի: Կացինը վերցնում է ու ծոծրակը քորելով ճամփա յե ընկնում դեպի տուն:

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում: Տեսնում է մեջը վայրի բաղեր են լողում: Ասում է՝ գլուխը քաբը, չեղավ չեղավ, արի գտնե մի բաղ սպանեմ, տանեմ տամ կնկանս: Ասում է ու կացինը պառտում, շպրտում դեպի բաղերը, վոր մինն սպանի. բաղերը ձղձղալով ցրվում են, փախչում, վորը յեզեզնուն է մտնում, վորը թռչում գնում, կացինն ել ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում: Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս: Ի՞նչ անի, ինչ չանի: Շորերը հանում է գնում լճի ափին, ինքը մտնում մեջը, վոր կացինը հանի: Գրնում է, գնում, քանի առաջ է գնում, ջուրն ենքան խորանում է, տեսնում է կարող է խեղդվել, յետ է դառնում, դուրս գալի:

Գու մի ասիլ՝ Փանոսը վոր լիճն է մտնում ու խորը գը-
նում, ետ ժամանակ լճափով մի անցկենոյ է լինում, տեսնում
է ետեղ թափած շորեր կան, յեղեղնուտի մեջ խորը գնացած
Փանոսին ել չի նկատում, ես շորերը հավաքում է, առնում գնում:
Փանոսը լճից դուրս է գալի, տեսնում շոր չկա: Մնում է
տկլոր կանգնած:

Միտք է անում. «Ի՞նչ անեմ, տեր աստված, եսպես տկլոր
նւր գնամ»:

Սպասում է մինչև մուլթն ընկնի: Մթան հետ վեր է կե-
նում, գնում գյուղը: Վոր գյուղին մտանում է, ասում է՝ ես-
պես տկլոր վոր գնամ մեր տունը—տանըցիք ի՞նչ կասեն: Արի
գնամ ախպորիցս շոր առնեմ հաղնեմ՝ ենպես գնամ կնկանս մոտ:

Ճամփեն ծուռ է դեպի ախպոր տունը:

Դնւ մի ասիլ՝ ետ գիշեր ել ախպոր մոտ մեծաբք կա, քե-
ֆի ել են տաք ժամանակն է: Դուռը ծերպ է անում, տեսնի ով
կա, ով չկա. հյուրերից մինը կարծում է, թե շունն է, ձեռի
կրծած վոսկորը շարտում է դեպի դուռը, վոսկորը դիպչում է
աչքին, աչքը հանում:

Փանոսը ցավից վայ-վայ անելով յետ է դառնում, շներն
ես ձենի վրա վեր են կենում, տեսնում են մթնումը հրես մի
տկլոր ոքմին, ու չորս կողմից վրա յեն տալիս: Շների հաջոցի
վրա մարդիկ դուրս են թափում, տեսնում են՝ մի տկլոր մարդ
տաձելու վճուռ էն, վոր կա թե չկա սա սատանա յե:

Բավական տեղ զըչըղու տալով, հայհոյելով, հարա-հրոցով
ընկնում են յետևից, հալածում, տանում գցում անտառները:
Շներն ել յետևիցը մի ճուռը պոկում են, ու եսպես տկլոր, աչ-
քը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում:

Մյուս ուրը գյուղում տարածվում է, թե հապա չեք ասիլ՝
«Փանոսը կորել է: Գնացել է անտառը փետի ու յետ չի յեկել»:
Գեգահավան հավաքում են գնում. գնում են անտառը ման գալի,
սեղն ու յեղները գտնում են ծառի տակին ջարդված—ինքը չկա:
Դեռ Փանոս, դեռ Փանոս. հարց ու փորձով հազուստն ել
գտնում են մեկի մոտ:

—Մ'յ մարդ, ես հազուստը վճրտեղից է ընկել քեզ մոտ:



— Թե՛ արայեր, ես հագուտը ետպեա մի լճի ամինն վեր
ածած եր, հավաքեցի բերի:

Գնում են լճի չորս կողմը պտըտում, կանչում՝ «Փանոս,
Փանոս,» Փանոսը չկա:

Վճռում են վար Փանոսը խեղդվել է:

Գալիս են ժամ ու պատարագ են անում, քելեխը տալիս:
Կնիկն էլ մի քիչ սուգ է անում, Փանոսին զովում, ամսոսում,
հետո մի ուրիշ մարդ է ուղում, հետը պսակվում զնում:

1914

ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

1

Լինում է չի լինում մի խեղճ մարդ՝ անունը Նազար: Ես
Նազարը մի անշնորհք ու ալարկոտ մարդ է լինում. Էնքան էլ
վախկոտ, Էնքան էլ վախկոտ, վոր մենակ վտը վտի առաջ չեր
դնիլ, թեկուզ սպանեյիր: Որը մինչև իրիկուն կնգա կողքը կըս-
րած՝ նրա հետ դուրս գնալիս դուրս եր գնում, տուն գալիս՝
տուն գալի: Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար:

Ես Վախկոտ Նազարը մի գիշեր կնգա հետ շեմքն է դուրս-
գալի: Վոր շեմքն է դուրս գալի՝ տեսնում է ճրըճրըքան լուս-
լուսնյակ գիշեր՝ ասում է.

— Ա՛յ կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր է... Սիրտս ա-
սում է՝ վեր կաց գնա Հնդրստանից յեկող Շահի քարվանը կտրի
բեր տունը լցրու...»

Կնիկը թե.

— Ձենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...»

Նազարը թե.

— Ա՛նգգամ կնիկ, ինչո՞ւ չես թող անում յես գնամ քար-
վան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Ել ինչ տղամարդ եմ յես, էլ
ինչո՞ւ յեմ գդակ ծածկում, վոր դու համարձակվում ես իմ առա-
ջը խոսես»:

Վոր շատ կովում է՝ կնիկը տուն է մտնում դուռը փակում:

— Հնդեմ եղ վախկոտ գլուխդ, դե հիմի գնա քարվան կըս-
րի»:

Ես Նազարս անում է դռանը: Վախից լեղապատառ ե լինում:
Ինչքան աղաչում-պաղատում է, վոր կնիկը դուռը բաց անի, չի
լինում, բաց չի անում: Ճարը կտրած գնում է մի պատի տակի
կուչ է գալի, դողալով գիշերն անց է կացնում մինչև լուսը բաց-
վում է: Նազարը խռոված պատի տակին արեկող արած սպասում

ե, վոր կնիկը զա տուն տանի, ու միտք ե անում: Ամառվա շոք
որ՝ զազազած ճանճեր. ինքն ել կնքան ալարկոտ, վոր ալարում
ե քիթը սրբի—ճանճերը գալիս են սրա քիթ ու պոռնոզին վեր
գալի, լցվում: Վոր շատ նեղացնում են՝ ձեռք տանում ե յերեսին
զարկում: Վոր յերեսին զարկում ե՝ ճանճերը ջարդվում են առա-
ջին վեր թափում:

— Վահ, ես ինչ եր...» Մնում ե զարմացած:

Ուզում ե համրի թե մի զարկով քանիսն սպանեց՝ չի կարողա-
նում: Մտածում ե, վոր հազարից պակաս չի լինիլ:

— Վահ,—ասում ե,—յես եսպես ազամարդ եմ ելել ու մինչե
եսոր չեմ իմացել...Յես, վոր մի զարկով կարող եմ հազար շունչ
կենդանի ջարդել, ել լինչ եմ ես անպիտան կնգա կողքին վեր
ընկել...»

Շատեղից վեր ե կենում ուղիղ գնում իրենց գյուղի տեր-
տերի մոտ:

— Տերտեր, որհնյա ի տեր:

— Աստված որհնի, վորդիս:

— Տերտեր, բա չես ասիլ եսպես եսպես բան:

Պատմում ե իր քաջագործությունը ու հետն ել հայտնում
ե, վոր պետք ե իր կնգանից կորչի, միայն խնդրում ե՝ իր արա-
ծը տերտերը զրի, վոր անհայտ չմնա, ամենքն ել կարգան իմա-
նան: Տերտերն ել, կատակի համար, մի փալասի կտորի վրա զը-
րում ե.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,

Վոր մին զարկի՝ ջարդի հազար:

Ու տալիս ե իրեն:

Նազարս ես փալասի կտորը մի փետի ձերի ամբացնում ե,
մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքը, իրենց հարեանի իշին
նստում ու գյուղից հեռանում:

2

Իրենց գյուղից դուրս ե գալի, մի ճամփա յե ընկնում ու
գնում: Ինքն ել չի իմանում, թե եղ ճամփեն ուր ե տանում:

Գնում ե գնում, մին ել յետ ե նայում, տեսնում ե գյուղից
հեռացել ե: Շատեղ սիրտն աճ ե ընկնում: Իրեն սիրտ տալու հա-
մար սկսում ե քթի տակին մրմուռ, յերգել, իրեն իրեն խոսել,

իշի վրա բարկանալ: Քանի հեռանում ե՝ կնքան վախը սաստկա-
նում ե, քանի վախը սաստկանում ե՝ կնքան ձենը բարձրացնում
ե, սկսում ե զորգոռալ, հարայ-հրոց անել, հետն ել մյուս կող-
մից եշն ե սկսում գոալ... Շա աղմուկից ու աղաղակից թռչուննե-
րը մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են
փախչում, զորտերը կանանչիցն են ջուրը թափում...
Նազարը ձենն ալելի յե գլուխը գցում. իսկ վոր մտնում ե
անտառը—թվում ե՝ թե ամեն մի ծառի տակից, ամեն մի թփի
միջից, ամեն մի քարի յետևից՝ վորտեղ վոր ե զազան ե հար-
ձակվելու կամ ավազակ. սարսափած սկսում ե զորգոռալ, վոնց
զորգոռալ—ականջդ վոչ լրսի:

Գու մի ասիլ հենց ես ժամանակ մի գյուղացի ձին բա-
շելով անտառում միամիտ գալիս ե: Շա զարհուրելի ձենը ական-
ջըն ե ընկնում թե չե կանգնում ե.

— Վահ, ասում ե, վոնց թե իմն ել ետեղ եր հատել. կա-
չկա ես ալաղակներ են...»

Ձին թողնում ե, ընկնում ե ճամփի տակի անտառն ու՝ յեր-
կու վտան ուներ յերկուսն ել փոխ ե առնում՝ փախչում:

Բախտը սիրեմ Քաջ Նազար. զորգոռալով գալիս ե տես-
նում մի թամբած ձի ճամփի մեջտեղը կանգնած իրեն ե սպա-
սում: Իշիցը վեր ե գալի ես թամբած ձիուն նստում ու շարու-
նակում իր ճամփեն:

3

Շատ ե գնում, քիչ ե գնում, շատն ու քիչն ել ինքը կիմա-
նար, գնում ե ընկնում մի գյուղ. ինքը գյուղին անձանոթ գյուղն
իրեն: Ո՞ւր գնա, ուր չի գնա: Մի տանից գուռնի ձեն ե լսում.
ձին քշում ե ես ձենի վրա, գնում ե ընկնում մի հարսանքա-
տուն:

— Բարի որ ձեգ:

— Ա՛յ աստծու բարին քեզ, բարով հազար բարի յեկար:

Համեցեք հա, համեցեք. դե զոնախն աստծունն ե. սրան
տանում են իր դրոշակով սուլորի վերի ձերին բազմեցնում: Աչքդ
են բարին տեսի, ինչ վոր լցնում են առաջը—թե ուտելիք,
թե խմելիք:

Հարսանքավորները հետաքրքրվում են իմանան, թե ով ե

ես տարրերինակ անձանոթը: Ներքի ձերից մինը բռնում է իր կողքի նըստածին ու հարցնում, սա ել իր կողքի նստածին է բռնում, եսպես հերթով իրար բռնելով ու հարցնելով բանը մնում է վերի ձերին նստած տերտերին: Տերտերը մի կերպով գոնախի գրոշակի վրա կարգում է.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկի՝ ջարդի հազար:

Կարգում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին, սա սել իր կողքի նստածին, սա ել յերրորդին, յերրորդը չարբորդին. եսպետով հասնում է մինչև դռան տակը ու ամբողջ հարսանքա տունը դրը մըում է թե՛ բն չես ասիլ նորեկ գոնախն է ինքը.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկի՝ ջարդի հազար:

— Քաջ Նազարն է հմ...բացականում է պարծենկոտի մինը. ինչքան է փոխվել. միանգամից լավ չճանաչեցի...»

Յեվ մարդիկ են գտնվում, վոր պատմում են նրա արած քաջագործությունները, հին ծանոթությունն ու միասին անցկացրած որերը:

— Հապա ինչպես է, վոր եսպես մարդը հետը վոչ մի ծառայունի, գարմանքով հարցնում են անձանոթները:

— Նղպես է դրա սովորությունը, ծառաներով ման դալ չի սիրում: Մի անգամ յես հարցրի, ասով՝ ծառան ինչ եմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան:

— Հապա ինչպես է, վոր մի կարգին թուր չուների, ես ժանգոտ յերկաթի կտորն է մեջքին կապել:

— Շնորհքն ել հենց դրա մեջն է, վոր ես ժանգոտ յերկաթի կտորով մին գարկես ջարդես հազար, թե չե լավ թրով— ինչ կա վոր, սովորական քաջերն ել են ջարդում:

Ու ապշած ժողովուրդը վոտի յե կանգնում խմում է Քաջ Նազարի կենացը: Իրենց միջի խելոքն ել դուրս է գալի ճառ է ասում Նազարի առաջ. ասում է՝ մենք վաղուց եյինք լսել քո մեծ հուշակը, կարոտ եյինք յերեսդ տեսնելու և ահա ետոր քախտավոր ենք, վոր քեզ տեսնում ենք՝ մեր մեջ: Նազարը հառաչում է ու ձեռքը թափ է տալի: Ժողովուրդականները խորհրդավոր իրար աչքով են անում, հասկանում են, թե եզ հառաչանքն ու ձեռքի թափ տալն ինչքան բան կնշանակեր...

Աշուղն ել, վոր ենտեղ եր, ձեռաց յերգէ հորինում ու յերգում:

Բարով յեկար, հազար բարի,
չըգոր արծիվ մեր սարերի,
Թագ ու պարծանք մեր աշխարհի,
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկես ջարդես հազար:

Խեղճ տրկարին դու ապավեն,
Ազատ կանես ամեն ցավեն,
Մեզ կըփրկես անիրավեն,
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկես ջարդես հազար:

Մատաղ ենք մենք քո գլորոշին,
Մեջքիդ թըրին, տակիդ ուշին,
Նրա վոտին, պոչին, բաշին,
Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկես ջարդես հազար:

Ու ցրվելով հարբած հարսանքավորները տարածում են ամեն տեղ, թե գալիս է

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկի՝ ջարդի հազար:

Պատմում են նրա զարմանալի քաջագործությունները, հկազարում են նրա ահեղի կերպարանքը: Ու ամեն տեղ իրենց նորածին յերեխաների անունը դնում են Քաջ Նազար:

Հարսանքատնից հեռանում է Նազարն ու շարունակում է իր ճամփեն: Գնում է հասնում մի կանանչ դաշտ: Ես կանանչ դաշտում ձին թողնում է արածի, դրոշակը տնկում է, ինքն ել դրոշակի շվաքումը պատկում քնում:

Դու մի ասիլ ռխտը հսկա յեղբայրներ կան, ռխտը ավագակապետ, ես տեղերը նրանցն են, իրենց ամբոցն ել մտտիկ սարի գլխին է: Ես հսկաները վերևից մտիկ են տալիս՝ վոր մի մարդ յեկել է իրենց հանդում վեր է յեկել: Շատ են զարմանում, թե

ես ինչ սրտի տեր մարդ պետք է լինի, քանի գլխանի, վոր առանց քաշվելու յեկել է իրենց հանդուժ հանդիստ վեր յեկել ու ձին ել բաց թողել: Ամեն մինը մի գուրգ ուներ քառասուն լըգրանոց: Ես քառասուն լըգրանոց գուրգները վերցնում են գալի: Գալիս են ինչ են տեսնում. հրես մի ձի արածում է, մի մարդ կողքին քնած, գլխավերևը մի դրոշակ տնկած, գրոշակի վրեն գրած.

Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկի՝ շարդի հազար:

Վայ, Քաջ Նազարն է... Մատները կծում են հսկաներն ու մնում են տեղները սառած: Դու մի ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց ել է լինում հասած: Եսպես թուզները ցամաքած, չորացած սպասում են, մինչև Նազարն իր քունն առնում է ու զարթնում. վոր զարթնում է աչքերը բաց է առնում տեսնում գլխավերևը քառասուն լըգրանոց գուրգներն ուսներին ոխտան ահռելի հսկաներ կանգնած՝ ել փորումը սիրտ չի մնում: Մտնում է իր դրոշակի յետեն ու սկսում է դողալ, վոնց վոր աշունքվա տերեր կողզա: Ես հսկաները վոր տեսնում են սա գունատվեց ու սկսեց դողալ, ասում են՝ բարկացավ, հիմի վորտեղ վոր է մի գարկով ոխտիս ել կսպանի, առաջին գետին են փովում ու խընդրում են.

— Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Վոր մին գարկես՝ շարդես հազար:

Մենք լսել էյինք քո ահավոր անունը, տեսությանդ էյինք փափագում. այժմ բախտավոր ենք, վոր քո վոտով ես յեկել մեր հողը: Մենք, քո խոնարհ ծառաներդ՝ ոխտան ախպեր ենք, ահա մեր ամբոցն ել են սարի գլխին ե՛ մեջը մեր զեղեցիկ քույրը: Ազաչում ենք շնորհ անես զաս մեր հացը կարես...»

Եստեղ Նազարի շունչը տեղն է գալի, նստում է իր ձին, նրանք ել դրոշակն առած առաջն են ընկնում ու հանդիսավոր տանում են իրենց ամբոցը: Տանում են ամբոցում պահում պատվում թագավորին վայել պատվով, ու ենքան են խոսում նրա քաջագործություններից, ենքան են գովում, վոր իրենց զեղեցիկ քույրը սիրահարվում է վրեն: Ինչ ասել կուզի՝ հարզն ու պատիվն ել հետն ավելանում է:



Ես ժամանակ մի վազը ե լուս ընկնում ես յերկրում ու սարսափ ե գցում ժողովրդի վրա: Ո՞վ կսպանի վազրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկե Քաջ Նազարը կսպանի: Ել ո՞վ սիրտ կանի վազրի դեմ գնա: Ամենքն ել Նազարի յերեսին են մտիկ տալի. վերեվը մի աստված, ներքեը մի քաջ Նազար:

Վազրի անունը լսելուն պես Նազարը վախից դուրս ե վազում, ուզում ե փախչի յետ գնա իրենց տունը, իսկ կանգնածները կարծում են թե վազում եր, վոր գնա վազրին սպանի: Նըշանածը բռնում ե կանգնեցնում, թե՛ ուր ես վազում եղպես առանց զենքի, զենք առ հետդ ենպես գնա: Զենք ե բերում տալիս իրեն, վոր գնա իր փողի վրա մի քաջություն ել ավելացնի: Նազարը զենքն առնում ե դուրս գնում: Գնում ե անտառում մի ծառի բարձրանում, վրեն տապ անում, վոր վոչ ինքը վազրին պատահի, վոչ վազրը իրեն: Ծառի վրա կուչ ե դալի ու Նազարն ու՛ կտա—հողին դառել ե կորկի հատ: Հակառակի համան անտեր վազրն ել դալիս ե հենց ես ծառի տակին պառկում: Նազարը վոր վազրին չի տեսնում—լեղին ջուր ե կարում, աչքերը սևանում են, ձեռն ու վորը թուլանում են ու, թրը՛ մփ, ծառիցը ընկնում ե գագանի վրա: Վազրը սարսափած տեղիցը վեր ե թռչում, Նազարն ել վախից կպչում ե սրա մեջքին: Եսպես զարհուրած Նազարը մեջքին կպած ես խրտնած վազրը փախչում ե, վոնց ե փախչում, ել սար ու ձոր, քար ու քոլ չի հարցնում:

Մարդիկ մին ել տեսնում են, վահ, Քաջ Նազարը վազրին նստած քշում ե:

— Հնչ-հարնչ, յեկեք հա, յեկեք, Քաջ Նազարը վազրին ձի յե շինել հեծել...ավեք հա տվեք...» Մրտավորվում են, ամենքը մի կողմից հարայ-հրոցով, հրհրոցով հարձակվում են՝ խանչալով, թրով, թվանքով, քարով, փետով տալիս են սպանում:

Նազարը վոր ուշքի յե դալի, լեղուն բացվում ե—ափսոս, —ասում ե,—ընչի՞ սպանեցիք, գոռով մի ձի եյի շինել նստել... ենքան պետք ե քշելի վոր...»

Լուրը գնում ե հասնում ե ամբողջը: Մարդ, կին, մեծ, պըստիկ՝ ժողովուրդը դուրս ե թափում Նազարին ընդունելու: Վրեն յերգ են կապում ու յերգում:

Ես աշխարհքում,
Մարդկանց շարքում
Ո՞վ կըլինի քեզ հավասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ինչպես ուրուր,
Կայծակ ու հուր,
Բարձր բերդից թռար հասար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ահեղ վազրին
Արիբ քո ձին,
Հեծար անցար դու սարեսար,
Ո՞վ Քաջ Նազար:

Մեզ փրկեցիր,
Ազատեցիր,
Փառք ու պարծանք քեզ դարեդար,
Ո՞վ Քաջ Նազար:

Ու պսակեցին Քաջ Նազարին հսկաների գեղեցիկ քրոջ հետ,
սխտն սր, սխտը զիշեր հարսանիք արին, յերգերով գովեցին թագավորին ու թագուհուն:

— Լուսընկան նոր սարն յելավ,
Են ում նըման եր:

— Լուսընկան նոր սարն յելավ,
Են Քաջ Նազարն եր:

— Արեգակ նոր շաղեշաղ,
Են ում նըման եր:

— Արեգակ նոր շաղեշաղ,
Են իր նազ—յարն եր:

Մեր թագավորն եր կարմիր,
Իրեն արեն եր կարմիր,

Թագն եր կարմիր, հնյ կարմիր,
Կապեն կարմիր, հնյ կարմիր,
Գոտին կարմիր, հնյ կարմիր,
Սուլեր կարմիր, հնյ կարմիր,
Թագուհին կարմիր, հնյ կարմիր,
Կարմիր թագուհուն բարև,
Կարմիր թագավորին արև:

Շնորհավոր, շնորհավոր,
Քաջ Նազարին շնորհավոր,
Իր նազ-յարին շնորհավոր,
Վողջ աշխարհին շնորհավոր:

6

Դու մի ասիլ ես աղջկանը ուզած ե լինում հարեան յերկ-
րի թագավորը: Վոր իմանում ե իրեն չեն տվել՝ ուրիշի հետ են
ամուսնացրել՝ զորք ե կապում պատերազմով գալիս ե ոխան
ախպոր վրա:

Ես ոխաը հսկան գնում են Քաջ Նազարի մոտ, պատերազ-
մի լուրը հայտնում են, գլուխ են տալի առաջը կանգնում՝ հը-
րաման են խնդրում:

Պատերազմի անունը վոր լսում ե՝ սարսափում ե Նազարը,
դուրս ե պրծնում, վոր փախչի յետ գնա իրենց գյուղը: Մարդիկ
կարծում են ուզում եր իսկույն դուրս վազել հարձակվել թշնա-
մու բանակի վրա: Առաջն են ընկնում բռնում են խնդրում, թե
ախր առանց զենքի ու զրահի մենակ ուր ես գնում, ինչ ես ա-
նում, գլխիցդ ձեռք ես վերցրել, ինչ ե:

Բերում են զենք ու զրահ են տալի, կնիկն ել յեղբայրնե-
րին խնդրում ե, վոր չթողեն Նազարին իր քաջությունից
տարված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Յեվ լուրը զը-
նում տարածվում ե զորքի ու ժողովրդի մեջ, լրտեսների միջո-
ցով ել հասնում ե թշնամուն, թե Քաջ Նազարը մենակ առանց
զենքի թույլում եր զեպի պատերազմի դաշար, հաղիվ են կարողա-
ցել զսպել ու շրջապատած բերում են...

Պատերազմի գաշտում մի ամենի նժույգ ձի յեն բերում
Նազարին նստեցնում վրեն: Վոզեվորված զորքն ել հեռը վեր ե

կենում անագին աղմուկով,—կեցցե Քաջըն Նազար...ման թըշ-
նամհուն...

Նազարի տակի նժույգը, վոր տեսնում ե վրեն ինչ անպե-
քի մինն ե նստած՝ խրխնջում ե, գլուխն առնում ու թռչում ա-
ռաջ, ուղիղ զեպի թշնամու բանակը: Չորքերը կարծում են Քաջ
Նազարը հարձակվեց, ուռուս յեն կանչում ու իրենք ել յետևից
հարձակվում ամենայն սաստկությամբ: Նազարը վոր տեսնում ե
չի կարողանում իր ձիու գլուխը պահի, քիչ ե մնում վեր ընկնի,
ձեռք գցում ե, ուզում ե մի ծառից փաթաթվի, դու մի ասիլ ծա-
ռը փթած ե, մի գերանաչափ ձյուղը սոկ ե գալիս մնում ձեռին:
Թշնամու զորքերը, վոր առաջուց համբավը լսել էլին ու անը
սրտներումն եր, ես ել վոր իրենց աչքով տեսնում են՝ ել փոր-
ներումը սիրա չի մնում: յերես են շուռ տալիս,—փախի, վոր
փախի, թե մարդ ես գլուխդ պրծացրու, վոր Քաջ Նազարը ծառե-
րըն արմատահան անելով գալիս ե..:

Եղ որը թշնամուց ինչքան կոտորվում ե կոտորվում, մնա-
ցածները թուրները դնում են Քաջ Նազարի վրա տակին, հայտ-
նում են իրենց հպատակությունն ու հնազանդությունը:

Ու պատերազմի անեղ դաշտից Քաջ Նազարը հսկաների
ամրոցն ե վերադառնում: Ժողովուրդը հաղթական կամարներ ե
կապում, աննկարագրելի վոզեվորությամբ, ուռանքով ե կեցցե-
ներով, յերգով ու յերածառությունով, աղջիկներով ու ծաղիկնե-
րով, պատգամավորություններով ու ձառերով առաջն ե դուրս
գալի, ենպես մի փառք ու պատիվ, վոր Նազարը մնացել եր ապ-
շած շրջիված:

Եսպես առքով-փառքով ել բերում հրատարակում են իրենց
թագավոր ու բազմեցնում են թագավորի թախտին: Քաջ Նազարը
դառնում ե թագավոր, են հսկաներից ամեն մեկին ել մի պաշ-
տոն ե տալիս: Մին ել տեսնում ե աշխարհքը իր բըռան մեջ:

Ասում են մինչև ետը ել դեռ ապրում ու թագավորում ե
Քաջ Նազարը: Ու՝ յերբ քաջությունից, խելքից, հանձարից մո-
տը խոսք են գցում՝ ծիծաղում ե, ասում ե.

— Ի՞նչ քաջություն, ինչ խելք, ինչ հանձար. գատարկ
բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն ե: Բախտ ունես—քեֆ
արա...»

Յեվ ասում են՝ մինչև ետը ել քեֆ ե անում Քաջ Նազարը
ու ծիծաղում ե աշխարհքի վրա:

1908



Ց Ա Ն Կ

1. Գառնիկ Ախպեր	5
2. Չախչախ թաղավորը	14
3. Անխելը մարդը	20
4. Սուտասանը	24
5. Կացին ախպերը	26
6. Ուլիկը	28
7. Ծիտը	31
8. Պոչատ աղվեսը	34
9. Ճամփորդներ	38
10. Խոսող ձուկը	41
11. Խեյոջն ու հիմարը	46
12. Տերն ու ծառան	50
13. Կանառ աղջիկը	55
14. Անհաղթ աքլորը	64
15. Բարեկենդանը	65
16. Սուտիկ վորսկանը	71
17. Յեղեմական ծաղիկը	74
18. Անբան Հուռին	80
19. Կիկոսի մահը	84
20. Զախորդ Փանոսի հեքյաթը	89
21. Քաջ Նազարը	93

Պատ. խմբագիրը՝ Ն. Թումանյան
 Տեխ. խմբագիրը՝ Ան. Գասպարյան
 Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Գլավ. լրագոր Դ.—3615 Հրատարակ. № 4260.

Պատվեր 111 Տիրած 6000.

Թղթի 62×94. Տպագր. 61¹/₂ մամ.

Մեկ մամուլում 38.400 նիշ. Հեղինակային 41¹/₂ մամ.

Հանձնված է արտադրութային 4 հունվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրութային 28 հունվարի 1938 թ.

8995

305

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.
ԿԱԶՍԸ 50 ԿՈՊ.

907

1888

1
2

ՕՎ. ԿՄԱՆՅԱՆ

Տ Կ Վ Ք Ի

Գիտ Արմ. ՍՍՐ, Երևան, 1938 Գ.